

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

82

3976

Պրոֆեսորներ բոլոր յեղբուհի, միացե՛ք

Ն. Ի. ԲՈՒԽԱՐԻՆ

552

Լ Ե Ն Ի Ն Ի Զ Մ Ը

Յ Ե Վ

Կ Ո Ւ Լ Տ Ո Ւ Ր Ա Կ Ա Ն

Հ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ն Ո Ւ Թ Յ Ա Ն

Պ Ր Ո Ր Լ Ե Մ Ը

3K7

F-95

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հ.Կ.(Բ)Կ. ՅԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻ ԱԳԻՏ-ՊՐՈՊ ԲԱԺԻՆԻ

ՅԵՐԵՎԱՆ — 1928

5 JUN 2005

327

Պրոֆեսորներ բոլոր յեղրներին միացրել 2009

Բ-95

Ն. Ի. ԲՈՒԽԱՐԻՆ

Բ. Բ.

1007
33913

ԼԵՆԻՆԻԶՄԸ ՅԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ
ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊՐՈՒԼԵՄԸ

858
3200

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ.Կ.(Բ)Կ. ՅԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻ ԱԳԻՏ-ՊՐՈՊ ԲԱԺՆԻ

ՅԵՐԵՎԱՆ — 1928

1 MAR 2013

3976

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
 ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ,
 ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
 ԳՐԱՌԵՊ. 590բ
 ՏԻՐԱԺ 1000.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
 Գր. Բնօճիտակ
 ՀԱՅԿ-ԱՐՄԵՆԻԱ
 Պ. Ա. ՄԱՐԿ
 Ա. ՄԱՐԿԻՆԻ

4875-83

ԼԵՆԻՆԻԶՄԸ ՅԵՎ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՒՈՒ-
 ԹՅԱՆ ՊՐՈՒԲԼԵՄԸ

(ՃԱՌ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԼԵՆԻՆԻ
 ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՍԳԱՀԱՆԴԵՍՈՒՄ)

Ընկերներ.

Յես կուզեյի այսորվա սգանխատում խոսել մի-
 այն մի նյութի՝ և են ի ն ի զ մ ի և կ ու է լ ա ու է ր ա-
 չ ա ն հ և զ ա ի ո խ ու է թ յ ա ն մասին:

Յես այդ նյութն հմ վերցնում այն պատճառով,
 վոր ներկայումս այդ հարցը կենտրոնական, ամենա-
 գլխավոր պրոբլեմներից մեկն է, վոր կանգնած է թոր-
 հրգային Միության և մեր կուսակցության առջև:
 Մեր մեծ ուսուցչին լավագույն հարգանքը մատուցած
 կլինենք, յեթե մենք նրա՝ մեզանից հեռացած մեր այդ
 առաջնորդի հիշատակին նվիրված որին, կրկին ու
 կրկին զիմենք նրան, վորպեսզի կրկին ու կրկին
 ուժ քաղենք այն ուսմունքից, վոր թողել է մեզ
 Վլադիմիր Իլյիչը: Վորովհետև մեր խնդիրն է՝ «փոխել
 աշխարհը» — մի խնդիր, վոր անսահմանորեն ձևակեր-
 պել է զիտական կոմունիզմի հանճարեղ հիմնադիր
 Մարքսը: Մենք ստիպված ենք պայքարել միանգա-
 մայն բացառիկ դժվարությունների դեմ և հաղթահա-
 րել նրանց, մենք ստիպված ենք ապրել և պայքարել,
 շրջապատված լինելով կապիտալիստական աշխարհով:
 Դա մի հակառակորդ է, վորը փաստորեն մեզ մահու է
 կյանքի պատերազմ և հայտարարել: Դա զորեղ թշնա-

մի յե, վորն արդեն ղինված ե մինչև ատանները և ղինվում ե ավելի ու ավելի: Ներկայումս դարգահում են բուրժուական-կապիտալիստական գիտությունն ու տեխնիկան և կապիտալիստական աշխատանքի կաղ-մակերպությունը: Մերիաներով կատարվող և ստան-դարտային արտադրությունը, ելեկարիֆիկացիան, մի-շարք տեխնիկական նորագույն գյուտերը, հեղուկ ա-ծուխը, դազի բարեկամված արտադրությունը և ոգ-տագործումը, արհեստական նրբաթելի արտադրու-թյունը, վոր դնալով ավելի մեծ տեղ ե գրավում կա-պիտալիստական արդյունարերության մեջ և վորը կա-րելի յե կառավարական մոդական գավազանի մի շար-ժումով վերածել պայթուցիկ նյութերի արտադրու-թյան. վերջապես ուսգմ. մեծամեծ գյուտերը, ինքնա-շարժ մոտորն, գետնի յերեսին, ջրի տակ, ջրի վրա և ոգի մեջ—այս ամենը նշանակում ե կապիտալիզմի տեխնիկական այնպիսի մի «վերասարքավորում», վո-րի ոգնությամբ մեր կապիտալիստական հակառակորդն ավելի խորն ե նստում իր գահին: Պատերազմի՝ շրջա-նի և հետպատերազմյան ճգնաժամերը խորը, արյու-նահոս վերքեր հասցրին նրան:

Այդ ճգնաժամը դեռ չի վերացված, հորիզոնի վրա ուրվագծվում են նոր կատաստրոֆների նախա-նշանները: Սակայն, առայժմ, դեռևս չվերացված ճգնաժամի շրջաններում մեր հակառակորդը դեռ ամ-բանում ե իր ուժի և զորության հիմնական կենտրոն-ներում: Մենք պետք ե ամենայն հատկությամբ բո-րանենք, վոր մենք դեռ մրցակցության մեջ ենք առ-կավին զորեղ այդ իմպերիալիստական հակառակորդի հետ: Վնչ մի բողի, վնչ մի վարկյան մենք չպետք ե

աչքաթող անենք այդ պարագան: Մեզ վիճակված ե դեռ յերկար ժամանակ ապրել իմպերիալիստական սու-սերները կազմած շրջադժի ներսում: Մեզ վիճակված ե տեսական պայքար մղել բուրժուական հակահեղափո-խության այդ «սրբագան դաշինքի դեմ», վորը չի ու-զում և չի կարող մեզ հանդիսա թողնել, վորովհետև մեր հանգիստը, մեր շինարարությունը, մեր խաղաղ աշխատանքը, մեր վերելքը խախտում են իմպերիա-լիստական թագավորությունների հանդիստը, Այդ և պատճառը, վոր մեր շինարարությունը և այն խնդիր-ները, վոր մենք լուծում ենք յերկրի ներսում, այն-քան սերտորեն շաղկապված են միջազգային «մեծ» քաղաքականության հարցերի հետ և իրականում ան-բաժանելի յեն այդ հարցերից:

Մեր հակառակորդը պայքարում ե մեր դեմ բո-լոր տեսակի դնքերով, մեր հակառակորդը պայքարում ե մեր դեմ նաև դադափարախոտական ճակատում: Այդ վերջին ճակատի ամենակարևոր դնքերից մեկն ե չա-քաշահության յենթարկել մեր տեխնիկական-տնտե-սական հետամնացությունը, մեր անկուլտուրականու-թյունը, մեր գեռևս չվերացած չքավորությունը: Իմ-պերիալիզմի բոլոր պարագլուխները և նրա գովերգու-ները, կառուցվող սոցիալիզմի բոլոր թշնամիները, պրոլետարական յերկաթի դիկտատուրայի բոլոր ա-ստոյները, սոցիալ-դեմոկրատիայի բոլոր ցինիկները, մանր-բուրժուազիայի բոլոր մոլորյալները, սկիպտե-ցիզմով և տարակուսանքներով բոլոր տատապողները և մեր կործանման մասին կկացողները, — բոլորը չաքա-շահության են յենթարկում մեր հետամնացությունը: Մայրահեղ թիվում կանգնած են միջազգային կապի-

տալիզմի բաղմամբ ուժ պարագլուխները, իսկ շղթայեմյուս ծայրին՝ մեր ամեն կարգի «բարեկամաթշնամիները», վորոնք ավանդ, հաճախ իրենց զինքերը փոխեն առնում սոցիալիզմի բացարձակ թշնամիների գաղափարախոսական զինանոցից: Հաճախ կարելի չես տեսնել, թե ինչպես կապիտալիստ այս կամ այն կատաղած գաղափարախոսը և գործարարը, վոչ առանց կեղծ պաթոսի, բարբառում և, թե բայլընկները «մեծ ժանտախտ են», ասիական մի մեծ հիվանդություն, վոր սպառնում և Յեվրոպա խուժել: Ազմկարարների գարշելի ձայներով նրանք ազադակում են, թե բայլընկզմը «կործանում և բերում բովանդակ քաղաքակրթությանը և կուլտուրային»:

Իմպերիալիստական՝ առանձնապես տաքարյուն, առանձնապես յեռանդուն, և առանձնապես կեղծավոր ազմկարարներից մի քանիսը, առաջին հերթին կայսերական Ռուսաստանի «մտքերի իշխողները», անցնելով կենդանարանական մոլեղնության բոլոր սահմանները՝ այնքան հեռու յեն գնում, վոր Խորհրդային իշխանությունը «Դեվիլ» թագավորության մարմնացումն են համարում, «գրիվապետություն»:

Այսպես և զրում հակահեղափոխական չարությամբ շիկացած աղնվապետության յերգիչ քաղաքացի՝ Բերդյայիվը: Մեր սոցիալիստական հակառակորդները՝ լավագույն սրտակցության գործադրության արժանի յեռանդով տարածում են այն չարախինգ առասպելը, իբր թե մենք կիսասասիական մի յերկրում, վոր հին դարերից ի վեր ընտելացած և արևելյան տիպի բռնապետության, ստեղծել ենք մի այնպիսի իրավակարգ, վորը մազաչափ անգամ չի զանազան-

վում Խորտի և Մուսսոլինիի ստեղծած իրավակարգից: (Փակագծում նկատեմ, յերբ արոցկիստական ուղղից-իայից մի քանի ջահելներ մեզ հայհոյելով՝ ֆաշիստ են անվանում, նրանք այդ թունավորված զենքը փոխ են առնում իրենց սոցիալ-դեմոկրատական համախոհներից): Բովանդակ սոցիալ-դեմոկրատիան պնդում և, թե մենք, բայլընկներս, սոցիալիզմ կառուցելու ցնորական գործի յենք ձեռք դարկել,— մի գործ, վոր պահանջում և զանգվածների մեծ կուլտուրականություն և այդ պատճառով մեր բոլոր «ձեռնարկումները»՝ կանխավ անխուսափելի կրախի յեն գատապարտված, ինչքան ևլ մենք պատեպատ ընկնենք և ինչպիսի դեղեկագույն լողունգներ ևլ վոր հնարենք:

Ճակատագրի պատմական մեծ գրքում նախագծված և մեր կործանումը, վորովհետե մենք իբր թե պատմության յերկաթե որենքների զեմ ենք գնացել: Յեվ մեր կուսակցությունից հեռացած ուղղիցիոն բեկորները նույն այդ գծով են ընթանում, յերբ պնդում են, թե մեր կործանումը,— յեթե միայն մեզ չփրկի Արևմտյան Յեվրոպայում բռնկված մի պայթյուն և այնտեղի պրոլետարիատի իշխանությունը— գրեթե «կանխորոշված և»: Այսպես, սեղմելով տարբեր ստեղծներ, մարդիկ միեռնույն մեղեդին են նվագում:

Բնորոշ և այն փաստը, վոր հետամնացության, անկուլտուրականության պատճառաբանությունը միմիայն մեր՝ ԽՍՀՄ բայլընկներիս զեմն և, վոր բերվում և, յերբ մեր հեղափոխությունը մի հնջողություն մյուսի հետևից և համնում և մի հաղթանակ մյուսի հետևից և տանում:

Չափազանց բնորոշ և այն բանը, վորը, որինակ,

նույն այդ պատճառաբանութիւնը սրանից շատ ու շատ առաջ բերում էլին ընդհանրապես բանվորական կոմունիստական շարժման հակառակորդները, վորոնք քննադատում էլին կոմունիզմի բուն նպատակը, «ապացուցելով», թէ վոչ մի լավ բան չի կարող իրակա- նացնել անկուլտուրական դասակարգը, ճնշված դասա- կարգը, պարիաների դասակարգը, վորն ընդունակ է միայն կործանելու սանձաբձակ անելու վայրենի տա- րերքը և վորը, անխուսափելիորեն, հասարակութեանը հետ կզարձնի, համարյա դեպի նախապատմական ժա- մանակները: Բնորոշ է այն բանը, վոր մինչևիսկ կո- մունիստական շարժման կիսաբարեկամները կոմունիզ- մի ծագման հենց սկզբից, վոչ մեկ և վոչ էլ յերկու անգամ են սարսափով նահանջել նրանցից, վորոնց յերբեմն հենց իրենք են կանչել վորպէս արդի կապի- տալիստական քաղաքականութեան ակտերից փրկիչներ: Այնպիսի մի խոշոր անձնավորութիւն, այնպիսի մի մեծ բանաստեղծ, վորպիսին Հայնէն և, — մի մարդ, վորին Մարքսն իր «բարեկամն» և կոչել և վորն իսկապէս ամենարարեկամական մտերիմ հարա- ըբերութիւններն մեջ և յեղել գիտական սոցիալիզմի հիմնադիրն հետ, — կոմունիստների և կոմունիզմի մա- տին հետևյալն է գրել իր մահից քիչ առաջ (1854 թ.).

«Վոչ ինձ հաղթահարում է գեղարվեստագետի և գիտնականի ներքին յերկյուղը, յերբ մենք տես- նում ենք, վոր կոմունիզմի հաղթութեամբ սպառ- նալիքի տակ են դրվում ամբողջ մեր արդի քաղա- քակրթութիւնը, դժվարութեամբ ձեռք բերված այնքան դարերի նվաճումները, մեր նախորդները ամենաազնիվ աշխատանքների պատգմները»:

Յեւ հաջորդ, 1855 թ. Մարքսի այդ բարեկամը, Գերմանիայի հեղափոխական բանաստեղծը, գերմանա- կան հասարակայնութեան ամենարմատական անձնան վորութիւններից մեկը, իր մահվան գրեթէ շնամբին կոմունիստներին և կոմունիզմի մասին գրում է.

«Յերկյուղով ու սարսափով եմ յես մտածում այն պահի մասին, յերբ այդ մռայլ պատկերացումներն իշխանութեան գլուխ կանցնեն: Իրենց կոշտացած ձեռքերով նրանք անխնա ջարդ ու փշուր կանեն գեղեցկութեան մարմարյա արձանները, վոր այն- քան թանկ են ինձ համար: Նրանք կոչնչացնեն գեղարվեստի ստեղծած բոլոր այն թեթևարժեք գործերն ու նրա պաճուճանքը, վորոնք այնքան սիրելի յեն բանաստեղծին: Նրանք կկորստեն իմ դափնիների պուրակը ու նրա սեղը կարտոֆիլ կը ցանեն: Շուշանները, վոր վոչ ցանփել, վոչ հնձվել են, բայց և այնպէս նույնքան սքանչելի հանդերձ ունեն, վորքան Սոդոմոն թագաւորն իր ամբողջ վիայով, — արմատախիլ կարվեն հասարակական հողից: Վարդերը — սոխակների այդ տոնական հարս- նացուները, նույն բախտին կարժանանան: Սոխակ- ներին — այդ անշահավետ յերգիչներին, կքշեն, և — ավանդ — իմ «ղիրք յերգոցից» խանութպանը տող- բակներ կպատրաստի ու նրանց մեջ սուրճ կամ քթախոտ կիշոի ապագայի պառակների համար»:

Հետաքրքրական է, վոր մեր հասարակայնութեան այնպիսի մի խոշոր դեմք, — վորը հետագայում մեր կուսակցութեան անդամ դարձավ, վորպիսին Վալե- րիյ Բրյուսովն է, 1904 — 905 թ. գրել է, ըստ- ինքյան մի շատ գեղեցիկ վտանաւոր՝ «Ապագա հո-

ները» խորագրով, հետևյալ եպիգրամով. «Վրանահար արան նրանց գրախտը, Ատիլլան»: «Ատիլլան» — այստեղ կոմունիզմի կեղծանունն է. «գրախտը» — բուրժուական գրախտն է: Այստեղ մենք կարդում ենք այսպիսի տողեր. —

«Ո՞ւր եք հոներ, վոր դալիս եք,
Ամպամեկ եք յերկինքը բովանդակ:
Ձեր դոփյունն եմ լսում արույրի
Դեռես անհայտ պամիրներից:
Մեր գլխին՝ գինովցած վոհմակով,
Կթափվեք ձեր մութ կայաններից՝
Կյանք տալու գառամած մեր մարմին:
Բոցավառ արյան ալիքով:

.
.

Գուցե անհետ կկորչի այն ամենը,
Ինչ միայն մեզ եր հայանի,
Բայց ձեզ, վոր պիտի ջնջեք ինձ,
Դիմավորում եմ վողջույնի որհներգով»:

Վալերիյ Բրյուսովը մեզ համար և մեր դասակարգի համար «Վողջույնի հիմն» եր յերգում: Բայց մեր դասակարգը նա դնահատում եր վորպես «ապագա հոների»:

Բայց այս տրամադրությունները չափազանց բնորոշ էյին վո՞չ միայն մանր-բուրժուական ֆիլիստերներին, այլև բուրժուական կապիտալիստական աշխարհի լավագույն գլուխների համար, նույնիսկ նրանց համար, վորոնք իրենց անձնական բացառիկ հատկությունների շնորհիվ փորձում էյին դուրս գալ բուրժուական-կապիտալիստական իդեոլոգիայի ցան-

ցից: Նույնիսկ նրանք, վորոնք կոմունիստական բանվորական շարժման մեջ նախագրում, տեսնում էյին մի ինչ-վոր նոր, պատմականորեն խոշոր յերևույթ, վորը պիտի «բոցակեղ արյան ալիքով» աշխուժացներ բուրժուական կուլտուրայի և քաղաքակրթության «գառամյալ մարմինը», ն ու յ ն ի ս կ նրանք բանվոր դասակարգին նոր «հոներ» էյին անվանում, վորոնք ամենայն ինչ ջարդ ու փշուր կտնեն, կխորտակեն մարդկային հանձարի բոլոր փառահեղ ստեղծագործությունները, «հասարակ» կորեկ կցանեն նոք դաշտերում, նախորդ առանց մնացորդի վոչնչացնելով նախակապիտալիստական և կապիտալիստական կուլտուրայի ամբողջ ժառանգությունը:

Այդ ամենը գրելուց հետո քաղական յերկար ժամանակ է անցել: Շատ ջուր և թերես էլ ալիլի աբյուն և հոսել: Այդ ժամանակամիջոցը, սակայն, իբր յերկաթե լիզվով ալից մեզ բաղմաթիվ ճշմարտություններ, վորոնք զժվար թե կասկածելի լինեն յուրաքանչյուր քիչ թե շատ մասձող մարդու համար:

Պարզվեց, վոր քաղաքակրթությունն ու կուլտուրան, նրա բոլոր նվաճումներն ու նրա բոլոր արժույթները, վոր կուտակվել էյին զարերի ընթացքում, դանակի, կացնի տակ են գնում, վոչնչացման վտանգի յենթարկվում վո՞չ թե կոմունիստական «մոռյլ պատկերամարտները», վո՞չ թե կոմունիստական բանվորական շարժման հոնատիսլ ուղղիչները, այլ իմպերիալիստական բանակի չափազանց կոկ հագնված, «փայլուն» և «քանչկատիսլ» լիյտենանտներն ու գեներալները, վորոնք զինված էյին նույն քաղաքակրթության ամեն տեսակ նվաճումներով: Պարզվեց, վոր քա-

զաքակրթութիւնը բնաջնջման վտանգի յեն յենթարկում ամենաքրիստոնյա պետութիւններէ ել ալիլի կով հազնված ու փայլուն դիվանագիտական գործիչները՝ իրենց նրբացրած լեզվով, իրենց փայլուն ձեռնոցներով, ասածու և կուլտուրայի վերաբերմամբ իրենց ունեցած «ազնիվ» հողատարութեամբ, կոմունիզմն սպանելու իրենց «աստվածահաճո» մտքերով: Պարզվեց, վոր քաղաքակրթութիւնը վոչնչացնում են բանկերի և բորսաների տուղերը՝ իրենց բոլոր քնքույշ ու Սողոմոն թաղափորի պես պճնագորդ, արական և իգական սեռի «շուշաններով»: Պարզվեց, վոր հին կուլտուրան՝ քարուքանդ են անում նրանց գիտնականները, վորոնք նրբացնում, սրում են իրենց միաքր, ճոխացնում իրենց գիտութիւնը, վորպէսզի կապիտալին ի սպաս հնարեն առափել չափով մահաբեր՝ ժամանակակից քաղաքակրթութեան նյութական ու հոգևոր արժույթների կործանման գործիքներ: Պարզվեց, վոր կուլտուրան վոչնչացնող են հանդիսանում հոգևորականները, դեղարվեստագետները, գրականագետները և յերգիչները, վորոնք բոլոր միջոցներով, տարբեր լեզուներով սպասարկում են իմպերիալիզմի կործանարար քաղաքականութեանը:

Պողպատե ունեւերի կտորների, թունավոր գազերի, վոջիւնների, մարդկային կղկղանքի և արյան մեջ խեղդվելու սպառնալիքի տակ և կապիտալիզմի «ազնիվ» կուլտուրան, վորը պատրաստ և ինքն իրեն լափելու: Յեվ մենք, «մուսլ պատկերամարտներ» (վորքան և սագում մեզ այդ) կործանումը չենք բերում: Մենք այդ կուլտուրայից փրկում ենք այն բոլորը, ինչ արժեքավոր և: Այդ կուլտուրան վտանգի

յին յին թարկում մեր կապիտալիստ հակառակաբէնէրը: Նրանց դեմ և, վոր պետք և իր դունակը սրի յուրաքանչյուր ազնիվ մարդ, վոր ընդունակ և խորհրդածելու մեր ժամանակի մեծ խնդիրներէ մասին:

Պարզվեց և մի այլ բան. Մեր եպոխան, մեր ժամանակաշրջանը բոլորի համար բացահայտեց մի այլ նշմարութեան. պարզվեց, վոր ժամանակավոր քայքայման շրջանից հետո՝ «մուսլ կոմունիստական պատկերամարտները» վոչ միայն փրկում են հնից մնացած այն ամենը, վոր արժեքավոր և, այլ և ամեհատրագ կերպով, ալիլի արագ, քան վորեւ մեկը կկարողանար, մղում են մարդկային հակայական մաստաներն առաջ կուլտուրայի ճանապարհով, ստեղծում են կուլտուրական մասսայական մի մեծ շարժում, կուլտուրայի տրակտորով վերահերկում են ծայրից ծայր մեր ահագին յերկիրը, կյանքի յեն կունչում կուլտուրայի վոչ թե մասնակի աղամանդափայլ վտակներ, այլ մասսայական կուլտուրական շինարարութեան հակայական լայն ու խորը հեղեղատ:

Յեվ վերջապես, մի յերրորդ նշմարումութիւնը բացվեց այս ժամանակաշրջանում: Մեր առջև լայնորեն բացվեցին ստեղծագործական շինարարական աշխատանքի լայնածավալ հեռանկարներ, վորոնց ծանոթ չէր, չէր ել կարող ծանոթ լինել, կապիտալիստական աշխարհը:

Տնտեսութեան բնագավառում, մասսաների մեջ կատարվող աշխատանքի բնագավառում, գիտական ստեղծագործութեան բնագավառում, ընդհանրապես

կուլտուրայի բնագավառում մենք արդեն կանգնել ենք հսկայական մասշտաբի խնդիրները շեմքին, «կամերային» կուլտուրայի խցիկներից մենք զուրա ենք յեկնում քաղաքի փողոցներն ու հրապարակները և կուլտուրայի համբավաբերներ ենք ուղարկում գյուղերն ու շենքերը, ամենահետընկած խուլ ու մոռացված անկյունները: Մեր գիտությունն ավելի ու ավելի սկսում է շարժել մեր պրակտիկայի թափանիվը: Գիտությունը դադարում է մի զույգ կարիներտային գիտնականների զբաղմունք լինելուց, նա այլևս սնամիջականորեն շփվում է տնտեսական շինարարության մեծ խնդիրների հետ, վորից նա— ուղղակի թե անուղղակի— ստանում է իր տեսական պատվերները: Բանվոր դասակարգը տենդային արագությամբ լայնացնում է իր աշխատանքի շրջանակը: Նա պատմական կյանքի յե կոչում ձնշված ու տառապած ազգությունները, յեղբայրական ձեռքով ոգնում է նրանց կուլտուրայի դարգացմանը, ուստի և նորանոր խնդիրներ է դնում գիտության առջև:

Նա շողկալում, մի հսկայական համակարգության մեջ է առնում տնտեսական վողջ շինարարությունը, իր սիտական պլանով և պլանային նպատակի միասնականությամբ ժողովրդական տնտեսության առանձին մասերն ավելի ու ավելի միավորելով: Այս խնդիրներն ևս առաջադրում են գիտությանը հետաքրքրազույն պրոբլեմներ, վորոնք միանգամայն անհայտ են բուրժուական աշխարհի գիտությանը: Բանվոր դասակարգը, վերջապես, իր խոշոր ուշադրության առարկա յե դարձնում մարդուն, նրա աշխատանքը, նրա առողջությունը, դա իր հերթին, կյանքի յե կո-

չում նորանոր գիտելիքների մատաղ ծիլեր, նորանոր խնդիրներ է դնում, նորանոր ուղղություններով մերձեցնում իրար թիորիան և պրակտիկան, գիտությունն ու կյանքը:

Այսպես տճա բանվորական դիկտատուրայի մեխանիկան ավելի ու ավելի տիրարար՝ մղում է կուլտուրան կենսական ընդհանուր շրջանուտի մեջ, հպատակեցնելով հարստացող գիտությունը կյանքի նոր կարիքներին՝ նրա դարգացման ութմը համաձայնեցնելով պատմական մեծ պրոցեսի բազկերակի դարկերի հետ: Այսամենը շատ հեռու յե այն մտայլ մարդարեություններից, վորոնցով զբաղվում էյին բուրժուական-կապիտալիստական աշխարհի անգամ լավագույն գլուխները և այն վհատ, չարախնդրությամբ համեմված նվոցից, վորով զբաղվում են պրոլետարական դիկտատուրայի վրա ճղճղան ձայնով հաջող սոցիալդեմոկրատականություն անող «քննադատները»:

Ճիշտ է, հեղափոխական ճակատամարտների ժամանակամիջոցում բազմաթիվ «շուշաններ» թերթատվեցին և ավելի մեծ թվով «սոխակներ» ցիր ու ցան արվեցին իմպերիալիստական պատերազմի թնդանոթների զգրդամբ: Կարևորն այն է, վոր յեթե մենք համեմատության դնելու լինենք այն ավերիչ աշխատանքը, վոր իհայտ բերեց կապիտալիզմը, հեղափոխական պրոցեսի ավերիչ կողմերի հետ, ապա մաքուր խղճով կարող ենք ասել, վոր մենք շատ պակաս ծախսերով ենք գործ տեսնում,—մի գործ, վոր վերջնականապես կձախողեցնի կապիտալիստական քաղաքակրթության հղված բարբարոսների ավերիչ աշխատանքի հնարավորությունը:

Բանվոր դասակարգն ու իր կուսակցությունը կուլտուրական աշխատանքի ընադավառում առաջին պլանում են կանգնեցրել մասնաձև, վոչ թե անհատ բուրժուարին և վոչ ել շերմոցային եկզոտիկ տունկերին:

Մասնաձևն և կանգնած մեր կուլտուրական աշխատանքի կենտրոնում և հենց այս և նրա ծանրությունը:

Վորչափ ծիծաղելի, վողորմելի և անմիտ են հաղթական կոմունիզմին առաջադրվող մեղադրանքները բոլոր այդ «կուլտուրական կարգի փոտտարկումները»:

Վոչ այլ վոք, բայց յեթե Վլադիմիր Իլյինը, այդ կատարել հեղափոխականը, այդ մեծ կործանարարը, բանվոր դասակարգի այդ գորավարը, վոք մղեց նրան՝ դրո՞ տալու կալիտալիստական բերդերի, պալատների և առանձնակների (ОСОБНЯК) վրա, իր վերջին հողվածներում ամենակարուկ կերպով առաջադրեց կուլտուրական պրոբլեմը, վորպես մեր կուսակցական և իորհրդային աշխատանքի կենտրոնական պրոբլեմ: Ընկ. Լենինն ամենայն իրավամբ հայտարարեց, վոր բանվորական դիկտատուրան նվաճելուց և ամրացնելուց հետո արմատական կերպով փոփոխվում և սոցիալիզմի վերաբերմամբ մեր ունեցած տեսակետը: Նա գրում և.—

«Այդ արմատական փոփոխությունը կայանում և նրանում, վոր մենք առաջ ծանրություն կենտրոնը դարձնում էլինք և պարտավոր էլինք դարձնել քաղաքական պայքարը, հեղափոխությունը, իշխանությունը նվաճումը և այլն: Իսկ այժմ ծանրություն կենտրոնը փոխվում և այն չափով, վոր փո-

48-528/5


81662
1001/33912

խանցվում և խաղաղ կազմակերպչական, «կուլտուրական» աշխատանքի:

Յես պատրաստ ևս սուկ, վոր ծանրություն կենտրոնը մեղ համար փոխանցվում և կուլտուրաբորություն (культуричество), յեթե չլինեյին միջազգային փոխարարությունները, յեթե հարկազրված չլինեյինք պաշտպանելու մեր դերքեքը միջազգային մասշտաբով: Բայց յեթե մի կողմ թողնենք այդ և սահմանափակվենք տնտեսական փոխհարաբերություններով, ապա մեղ մոտ այժմ իբրք վոր ծանրություն կենտրոնը պարզակվում և կուլտուրաբորություն մեջ:

Այս միտքը, սմբողջ իր խորությունը և իր պատմական մասշտաբով պետք և ըմբռնի մեր կուսակցությունը յուրաքանչյուր այն անգամը, յուրաքանչյուր այն բանվորը, վոր ուզում և պարզ կերպով յուրացնեղ իր դասակարգի և նրա պատմական շարժման նպատակները:

Հիմնական դեկրով այդ միտքը նշել և դեռ ևս Մարքսը, Բանվորական դիկտատուրայի շրջանը, կալիտալիստական հասարակակարգի սոցիալիստական և ապա կոմունիստական հասարակակարգի անցման շրջանը կարող և դիավել հատուկ մի տեսակետով ևս, այն և՛ հենց իր, դեկավարող դասակարգի, բանվոր դասակարգի վերասարքավորման տեսակետով: Յեղ իբրք, մենք կարող ենք բանվորական դեկտատուրայի պրոցեսը դիտել կալիտալիստական իշխանություն ամրացման տեսակետով, մենք կարող ենք դիտել այն սոցիալիզմի տնտեսական բանվորական պայքարի տեսակետից, այսինքն մեր սոցիալիստական պայքարի շրջանաբերությունը,



տրանսպորտի (այն, ինչ վոր մենք կոչում ենք—պրո-
լետարիատի «իշխող գիրքեր», կամ թե մեր տնտեսու-
թյան «սոցիալիստական հարված») տեսակետից: Սա-
կայն մենք կարող ենք այդ ամբողջ պրոցեսը դիտել
քան վոր դասակարգի բնույթը և ժամանակի փոփո-
խություն տեսակետից: Ուրիշ խոսքով, այդ հակայա-
կան համաշխարհա-պատմական պրոցեսը մենք կարող
ենք դիտել մասնաբաժնի վերադաստի արա-
կելու, նրանց բնությունը փոխելու տեսակետից
և, առաջին հերթին, իրեն՝ պրոլետարիատին վերադաս-
տիարակելու տեսակետից:

Մարքսը, ինչպես հայտնի յե, ասել է, վոր քա-
ղաքացիական մեծ ճակատամարտերի ընթացքում,
ժողովրդական այն ճակատամարտերի ընթացքում,
վորոնցով լեցուն է կապիտալիստական հասարակա-
կարգը կոմունիզմից բաժանող փոթորիկից ժամանա-
կաշրջանը, բանվոր դասակարգը կիրպարանափոխում
է իր բնությունը:

Լենինը, վոր յերեքը մազաչափ անգամ չի շեղվել
մարքսիստական ուսմունքից, այլ միմիայն զարդացրել
է խորացրել է այն, «մասսաների կիրպարանափոխ-
ման» այդ պրորբեմը համարել է կարևորագույն, զբ-
վարագույն և ամենաեյական մի պրորբեմ, վոր զբված
է կուսակցություն առջև:

Ի՞նչպես էր ձևակերպում խնդիրը Վլադիմիր Իլ-
յիչը, յերբ նա մեքձենում էր կուլտուրական
հեղափոխության գաղափարի մեկնաբանու-
թյանը:

Նա ասում էր.

«Մեր առջև ծառանում են յերկու գլխավոր խն-

դիրներ, վորոնք դարաշրջան են կազմելու: Դա
—մեր ապարատի քարեփոխություն
ինդերն է,—ապարատի, վոր բուրովին բանի պետ-
քական չէ և վորը փենք ամբողջապես ժառանգել
ենք հին ժամանակաշրջանից:

Այստեղ, հնգամյա պայքարի ընթացքում, մենք
քրջորեն բարեփոխել վոչինչ չկարողացանք:

Մեր յերկրորդ խնդիրն է՝ գյուղացիու-
թյան համար կուլտուրական աշխա-
տանք կատարելը: Իսկ այդ կուլտուրական աշ-
խատանքը գյուղացիության մեջ, վորպես տնտե-
սական մի նպատակ, հետապնդում է հատ-
կապես կոոպերացումը: Լիակատար կոոպերաց-
ման պայմաններում մենք արգեն յերկու վտարով
կանգնած կլինեյինք սոցիալիստական հողի վրա:
Սակայն լիակատար կոոպերացման այդ պայմանը
յենթադրում է իր մեջ գյուղացիության այնպիսի
մի կուլտուրականություն (հատկապես գյուղ-
ացիության վորպես հակայական
մի մասնաշի), վոր այդ լիակատար
կոոպերացումն անհնարին է առանց
միամբողջ կուլտուրական հեղափո-
խության:

Յերբ մենք նորից ու նորից կարդում ենք այդ
տողերը, ապա ակամայից մարդու գլխում միտք է
ծագում՝ հապա ընկեր Լենինի այդ ձևակերպման մեջ
մեր մնաց բանվոր դասակարգը:

Առաջ է քաշված մի ամբողջ դարաշրջանի
համար (այդ պետք է ընդգծել.—Վլադիմիր Իլյիչի
խոսքն իրոք վոր դարաշրջանի մասին է) յերկու

խնդիր.— պ ե տ ա կ ա ն ա պ ա ր ա տ ի բարեփոխու-
թյուն և գ յ ու ղ ա ց ի ու թ յ ա ն համայնապարփալ
կոողերացում:

Մակերեսային «քննագատի» համար, վորն ամե-
նուրեք վերոնում և «ազգային սահմանափակութուն»
և «գյուղացիական թեքում», վոչինչ չարժե հայտարա-
րել, վոր դ ա ր ա շ ր ջ ա ն ի այդ խնդիրները «վար-
սահելու» մի արտահայտութուն և: Սակայն ինչպե-
ս և ըստ հյության լուծվում այս խնդիրը: Յերբ ընկեր
Լինինը խոսում և մեր պետապարատի բարեփոխման
մասին, նա այդ խնդիրն անքակտելիորեն կապակցում
և հենց բանվոր դասակարգի կուլտուրական վերելքի
հետ: Վորովհետև իրողես ինչ բան և ԽՍՀՄ-ի պետա-
կան ապարատը: Դա—պետական իշխանության կը-
մախքն և: Իսկ ինչ և պետական իշխանությունը մեր
յերկրում: Դա, յիթե խոսելու լինենք Մարքսի լեզվով,
բանվոր դասակարգն և, վոր «սահմանադրորեն պետա-
կան իշխանութուն» և դարձած:

Պետութունը մեզանում— դա բանվոր դասակար-
գի ամենալայն կազմակերպութունն և:

Հետևաբար պետական ապարատի բարեփոխու-
թյունը,— մի խնդիր, վոր ընկ. Լինինն առաջադրում
ևր մի ամբողջ դարաշրջանի համար,— մեր՝ բանվոր
դասակարգի մեջ կատարած աշխատանքի կարևորա-
զույն կողմերից մեկն և: Վճր գծով պետք և բարեփո-
խել մեր պետական ապարատը: Բ յ ու ղ ր ո կ ր ա -
տի դ մ ի դ ե մ մ ա ք ա ու լ ու գ ծ ո վ, բանվոր մաս-
սաներին կառավարելու արվեստ սովորեցնելու գծով:
Պետական ապարատի բարեփոխումը— դա խոշորագույն
չափով կուլտուրական սրբորենն և: Կուսակցության

ճրագրի մասին արտասանած իր ճառում (VIII-րդ հա-
մագումար) ընկ. Լինինն ասել և.—

«Մեզ քաջ հայտնի յե, թե այդ անկուլտուրա-
կանությունը վորքան նսեմացնում և Խորհրդային
իշխանությունը և վերստեղծում բյուրոկրատիա:
Խոսքով՝ խորհրդային ապարատը մատչելի յե յու-
րաքանչյուր աշխատավորին, իսկ գործնականում՝
նա հեռու յե ամենքին մատչելի լինելուց: Յեվ բը-
նավ վոչ այն պատճառով, վոր դրան խանգարում
են որենքները, ինչպես դա անդի ունեք բուրժուա-
զիայի որով, ընդհակառակը՝ մեր որենքներն ոճան-
դակում են այդ բանին: Բայց որենքներն այստեղ
բավական չեն, անհրաժեշտ և խոշոր չափերի դաս-
տիսրակչական աշխատանք,— մի բան, վոր արագ
կերպով ձեռք չես բերի սոսկ որենքի միջոցով. դա
յերկարատև, տհազին աշխատանք և պահանջում»:

Բանվոր դասակարգը հետզհետե միայն հասունա-
նում և կուլտուրապես. մի անգամից չի հասունանում.
հասունանում և վոչ իր բոլոր շերտերով համաչափո-
րեն: Նա, յիթե կարելի յե այսպես արտահայտվել,
«մաս-մաս» և հասունանում: Վ ո չ բ ո լ ո ր բանվոր-
ներն են անցնում բանֆակների և բուհերի բովից:
Վ ո չ բ ո լ ո ր բանվորներն են կարմիր դիրեկտոր-
ներ և խորհրդային ազմինիստրատորներ դառնում:
Վ ո չ բ ո լ ո ր բանվորներն են հավասար չափով մոտ
կանգնած Խորհրդային իշխանության մարմիններին
և այլն և այլն: Սակայն, թեկուզ և մաս-մաս, այնու-
ամենայնիվ բանվոր դասակարգը բարձրանում և աս-
տիճանից աստիճան: Յերբ նրա ճնշող մասսան ամուր
նստած կլինի կառավարման լծակների մոտ, այն ժա-

մանակ բյուրոկրատիան և բյուրոկրատիզմը կմահանան իրենց բնական մահով: Ուստի և բանվորները կուլտուրական մակտորդակի բարձրացումը նախադրյալ և մեր պետական ապարատի իրական բարեկազմման:

Յեզլ ախպետս՝ Վլադիմիր Իլյիչի հսկա ծրագիրը, վերը համառոտ, բայց շատ ցայտուն գծերով նշված և մեջ բերված հոգվածում, ստորաբաժանվում և յերկու մեծ պրոբլեմներէ. առաջինը՝ գյուղացիական մասսաների կոոպերացումը, վերի համար անհրաժեշտ և ամբողջ մի կուլտուրական հեղափոխություն, յերկրորդը՝ մեր պետական ապարատի բարեփոխումը և նրա կարևոր մասերը կուլտուրականորեն հասունացած բանվորներով լեցնելը: Շաղկապը համայնորեն կոոպերացված գյուղացիության և բյուրոկրատական չարիքներէից ազատազրկված պետական իշխանության վոսկրակազմի միջև, մի վոսկրակազմի, վեր իրոք «վորպետս պետական իշխանություն սահմանադրված բանվոր դասակարգին և».— ահա հենց այդ և դարաշրջանն իսկազմակերպչական-կուլտուրական խնդիրը: Լեւինի համար ամեն ինչի կենտրոն, կրկնում եմ, կանգնած և մասսան: Մեղանում, շատ տարիներ առաջ (թե մեր կուսակցության ներսում և թե կուսակցության շուրջը) մի ամբողջ բանակսիվ տեղի ունեցաւ կուլտուրական խնդիրների շուրջը: Վլադիմիր Իլյիչը հանդես յեկավ այն ժամանակ իր ամբողջ տեմպերամենտով, իր հեղափոխական ամբողջ կրքով և իր ճշմարտ տրամաբանության բովանդակ ծանրությամբ՝ ընդդէմ մեր շարքերում առաջ յեկած սխալ ըմբռումներէ: Շատերը Հոկտեմբերից հետո ուզում էին միանա-

գամից թռչել պրոլետարական յերկինք՝ չափից շատ վոզեորվում էյին, ջերմ ու կատաղի կերպով քննարկում էյին պրոլետարական կուլտուրայի խնդիրները, անմիջական հեղափոխություն էյին պատրաստում գիտության և տեխնիկայի բոլոր բնագավառներում, վոմանք յերազում էյին պրոլետարական կուլտուրա ըստեղծել գրեթե փորձնական-լաբորատորական ձևով: Վլադիմիր Իլյիչը բոլոր տեսակի դեմքերով հարվածում էր խնդրի նմանորինակ ձեակերպումները: Ինչո՞ւ: Այժմ այդ ավելի քան պարզ և: Նա վարվում էր, վորպետս հեռատես մի ուզմագետ: Նա իրավացիորեն յերկյուղ էր կրում, վոր մարդիկ կհափշտակվեն մտացածին, նեղ-լաբորատորական, ջերմոցային պրոբլեմներով, յերես կլարձնեն մասսայական, անհամաչափորեն ավելի տարրական, բայց իրենց տարրականությամբ բացարձակորեն կենսական կուլտուրական կարիքներից: Ահա թե ինչու «գատարկախոսությանը», «Փրագներին» պրոլետարական կուլտուրայի մասին՝ նա հակադրում էր պայքար այնպիսի բաների դեմ, վորպետսիքն են կաշառքը, կոմսնապարծությունը, անգրագիտությունը: Ահա թշնամին, ասում էր նա, ներան պիտի հարվածել, մեր բոլոր ճիգերն այստեղ կենտրոնացնել և այդ դեպքում մենք հաջող գործ կտեսնենք: Յեթե մենք սկսենք ներփակվել, յեթե մենք անջատենք բանվոր դասակարգը մասսայից, կամ թե գասակարգի մի մասն ամբողջ գասակարգից և կամ պրոլետարիատի վորեկ փոքրիկ խմբակցություն էր սոցիալական կենտրոնից, ապա մենք հսկայական և անուղղելի մի սխալ կգործենք:

Բանն այն է, վոր հեղաշրջենք բոլոր գիտու-

թյունները, այլ այն, վոր նշանակեալ դարձնենք գրա-
գիտութեան և կուլտուրայի ամենատարբակաւ թշնա-
միններին և նրանց արագ կերպով ջարդ ու փշուր ա-
նինք, այդ խնդիրը դնենք առաջին հերթին, այդ
քանի վրա կենսարոնացնենք մեր կուսակցութեան ամ-
բողջ ուշադրութեանը և այդ թշնամուն մահացու
հարված տանք:

Դրա հետ միասին Վլադիմիր Իլյիչը դնում էր մի
յ երկրորդ խնդիր, այն է՝ վերցնել կապիտալիզ-
մից այն ամենը ինչ հնարավոր է: Չի կարելի «այժմ»-ը
չստանա՞նք քեզնե՞ն ասել, չի կարելի ծանրութեան կենսա-
րոնն դարձնել մատեմատիկայի, կենսաբանութեան,
Ֆիզիկայի բնագավառում կատարվելիք հեղափոխու-
թյունը, նախապես, թեկուզ վորոշ տոկոսով, լուծած
չլինելով ասորական, նախնական խնդիրներ, վորոնք
առ յերկինք են ազազակում, վորոնց յեթե չլուծես
կարող ես վար գլորվել ու կործանվել:
Մնա թե ինչու Լենինն այնպիսի խորատակիչ համառու-
թյամբ խնդիր էր դնում՝ վերցնել կապիտալի-
զմից մից այն ամենը ինչ հնարավոր և
վերցնել, Լենինը բազում տեղի ունեցած միտինգի ժա-
մանակ (1919 թ. մարտին) Լենինն ասաց.—

«Մասան ճգմեց նրան (այսինքն՝ կապիտա-
լիզմին), բայց կապիտալիզմը ջախջախելով չես
կշտանա. պետք է վերցնել այն ամբողջ կուլտու-
րան, վոր թողել և կապիտալիզմը, և կառուցել սո-
ցիալիզմ.— պետք է վերցնել ամբողջ տեխնիկան,
գիտութեանը, ուսումը, գեղարվեստը,— առանց այդ
բռնի սոցիալիստական հասարակական կյանք ըս-
տեղծել անհնարին է: Իսկ այդ գիտութեանը, տեխ-

նիկան, գեղարվեստը մասնազետները ձեռքում է,
նրանց գլուխներում»:

Պետք է մտաբերել, վոր այն ժամանակ բանվոր-
ները, անգամ մեր կուսակցութեան անդամները, խոշո-
րագույն մասը չեր ըմբռնում այդ խոշոր անհրաժեշ-
տութեանը և հարկավոր յեղավ Լենինի յերկաթե
կամքն ու յերկաթե տրամաբանութեանը՝ թույլ չտա-
լու, վոր «ձախ Փրագը» քայքայի այն հեղափոխական
ճիշտ քաղաքականութեան գործը, վորը պատմական
ձանաթարհի ամենաբարդ վորոքապուշտները միջով
պիտի գուրս բերեր պրոլետարիատին խոշորագույն
վտանգների լարյուններին:

Սակայն, բացարձակապես սխալ կլիներ ներկա-
յացնել գործն այնպես, իբր թե Լենինն անհրաժեշտ
էր համարում պարզապես վոսխարել բուրժուա-
կան կուլտուրան մեզ մոտ իր ամբողջութեամբ և ան-
ձեռնմխելիութեամբ: Այդ տեսակ ձևակերպում Լենինը
չեր առջարկում: Նա բազմիցս ասել է, վոր պետք է
փոխ առնել այն, ի՞նչ օգտակար է պրոլետարիա-
տի համար, վճռականորեն դեն շարժելով այն, ինչ
ֆրաստակար է: Բավականաչափ հանրաձայնութեւ
վերաբերմունքը դեպի կրոնը, փիլիսոփայական իգեա-
լիզմը, բուրժուական հասարակագիտութեանը: Նա
բազմիցս յիշույթներ է ունեցել այնպիսի մարդկանց
դեմ, վորոնց գլուխները լիցուն են բուրժուական
տրագիցիաներով: Մասնավորաբար իր յիշույթների
ժամանակ նա ասել է, վոր գեղարվեստի բնա-
գավառում մեր մոտ բազմաթիվ մարդիկ կան, վորոնք
ձնունդ են բուրժուական աշխարհի և վորոնք պրոլե-
տարական գեղարվեստի գիմակի տակ միացնում են

«միանգամայն անճոռնի» բաներ: Բայց Վլադիմիր Իլ-
յիչը, վորպես հանճարեղ մի գորավար, գիտեր ու ժ ե բ
դասավորել՝ նայած թե կուլտուրական Փրոնտի այս
կամ այն հատվածն ինչ կարևորութուն ուներ: Իսկ
այդ ունակութունն անասարակ ճիշտ քաղաքակա-
նության, մասնավորաբար կուլտուրական քաղաքա-
կանության կարևորագույն պայմաններից մեկն է:

Վորովհետև, ըստ Լենինի, մեր «խաղաղ կազմա-
կերպչական», մեր «կուլտուրաբար» և այլ աշխատանք-
ները խաղաղ մի իդիլիա չեն, այլ պրոլետարիատի՝
հանուն սոցիալիզմի մղած դասակարգային
կռվի հատուկ մի ձև: Նույնիսկ այն ժամանակ, յերբ
Լենինն ասում է, թե «կոմունիզմը մենք պետք է կա-
ռուցենք մեր թշնամիների ձեռքով», կամ թե՛ «բուր-
ժուական լավ մասնագետը տաս վատ կոմունիստից
լավ է» — նա ուրիշ բան չեր ասում, բայց յի՞թե այն,
վոր դասակարգային պայքարը պետք է
տանել հատուկ մեթոդներով:

Այն որերից է վեր, յերբ Լենինը գրել է իր վեր-
ջին հոդվածները, բավականաչափ ժամանակ է անցել:
Յուրաքանչյուր գալիք տարին որեցոր աճող պարզու-
թյամբ պետք է ասի մեզ, վոր ամեն մի առանձին
դեպքի առթիվ մենք Վլադիմիր Իլյիչի մոտ պահա-
ռու պահաս չավով կգտնենք պատրաստի դեղատոմսեր:
Լենինից մի հյուսթյունը մակայն այդ պատրաստի դե-
ղատոմսերը չեն: Վլադիմիր Իլյիչը պահանջում էր մե-
զանից ուսումնասիրել այն, ինչ կա, իր ամբողջ կոն-
կրետությամբ, իր բոլոր առանձնահատկութուն-
ներով: Վլադիմիր Իլյիչը շատ հետո յեր այն մաքից՝
թե կարելի չէ այն լողունները և ձեռնարկումները՝

վորոնց մենք դիմում էյինք 2, 3 և 4 տարի առաջ,
փոխանցել ուղած դ ժամանակին: Յեվ յի՞թե մենք ու-
ղում ենք գործել Վլադիմիր Իլյիչի վոգով, մենք պետք
է հաշիվ տանք մեզ, թե ինչ փոփոխութուններ են
տեղի ունեցել այն ժամանակվանից է վեր, մենք պետք
է հաշվի առնենք, թե խնդիրներ է վեր մասը մենք ար-
դեն իրագործել ենք և վոր մասը դեռ պիտի իրագոր-
ծենք, ինչպե՞ս պետք է այդ խնդիրները վերագասա-
վորել, նոր հարաբերականների մեջ դնել նբանց, թե
ի՞նչ նոր պրոբլեմներ են ծագեցել մեր առջև և այլն:
Միմիայն այսպես կարող են դնել խնդիրը Լենինի ա-
շակերտները:

Կոպերացիայի մասին մեր մեջ բերած հոդվա-
ծում ընկ. Լենինը գրում է. —

«Մեզ կբավի այժմ կուլտուրական այդ հեղա-
փոխությունը, վորպեսզի մեր յերկիրը գառնա
ըստ ամենայնի սոցիալիստական
յերկիր, բայց մեզ համար այդ կուլտուրական
հեղափոխությունը պարունակում է իր մեջ անա-
սելի դժվարություններ՝ թե զուտ կուլտուրական
բնույթի (վորոհետև մենք անդրադեռ ենք) և թե
նյութական բնույթի, վորովհետև կուլտուրական
լինելու համար անհրաժեշտ է արտադրական նյու-
թական միջոցների վորոշ զարգացում, անհրաժեշտ
է ունենալ նյութական վորոշ խարիսխ:

Ճիշտ են այս թեղիտները նաև այժմ: Իհարկե,
ձեռտ են: Բայց և այնպես քանակական վորոշ փոփո-
խություններ այն ժամանակվանից է վեր տեղի յեն
ունեցել: Ներկայումս մենք չենք ապրում ոսվի շրջան,
մենք, չնայած մեր պետական բյուջեյի արտակարգ

լարման և մի շարք խոշորագույն դժգոհություններէ, աշուտամենայնիվ կարողացանք մեր բովանդակ տընտեսությունը և ամբողջ բյուջեն անպայման բարձրացնել ավելի բարձր մակարդակի: Այն, ինչ այն ժամանակ կարող էր հնչել սոսկ վերպես բարի ցանկություն (կուլտուրային հատկացվելիք նյութական միջոցներէ ավելացում), ներկայումս դառնում է մեզ հախար վոչ միայն սոսկ անհրաժեշտություն, այլ և—վերջը չափով—ախպիսի մի անհրաժեշտություն, վորին մենք, չնայած մի շարք դժգոհություններին այլ Փրոնտներում, այնուամենայնիվ բավարարում ենք: Յեթե Վլադիմիր Իլյին իր ճառերից մեկում ասել էր, թե չպետք է ժլատ լինել լուսավորության գործում, ապա այդ պետք է կրկնել ներկայումս, շատ ավելի սրելով խնդիրը: Վորովհետև նույնիսկ մի շարք տնտեսական խնդիրներ գեմ են անուում կուլտուրայի պրոբլեմին: Ամենքին հայտնի յե, վոր մենք, որինակի համար, մի շարք թերություններ ունենք հիմնական շինարարութեան մեր աշխատանքում—և՛ ձախողված հաշիվներ, և՛ անփութություն, և՛ դատ նախագծեր և այլն, և այլն: Վերջին հաշիվ գա մեր կուլտուրայի խնդիրն է: Մենք վրաս ենք տեսնում մինչև իսկ անմիջական արտադրական գծով այն պատճառով, վոր բավականաչափ չենք հետևում Արեմայան Յեվրոպայի և Ամերիկայի փորձին, վոր հաճախ մենք ուզում ենք ախպիսի Ամերիկաներ դանել, վորոնք արդեն գտնված են, վոր մենք դեռևս բավականաչափ չենք սովորել հաշիվել, չնայած, վոր դա մեզ համար ավելի կարեւոր է քան կապիտալիստի համար, վերջով հետև մեր տնտեսությունն ավելի մեծ մատչուար ունի:

Մեր շինքերը մեզ թանկ են նստում թե՛ այն պատճառով, վոր նյութը շատ թանկ է, և թե՛ այն պատճառով, վոր մենք տեխնիքական հնացած ձևեր ենք գերածում, այնինչ որչեկտիվորեն հնարավոր է ունենալ շինարարական այլ տեխնիկա: Բայց դա գործի բազմաթիվ կողմերից մեկն է միայն: Արտադրութեան սպիտակացման խնդիրը գեմ չի անուում միթե մեր բանվորի, մեր ծառայողի, մեր խնժենների, մեր աղճիխտարատորի ավելի կուլտուրանալու խնդիրն:

Մեր ապարատի վրաս աշխատանքը թե՛ քաղաքում և թե՛ գյուղում միթե կապված է աշխարհի հետ: Միթե մենք չեյինք ուժեղացնի մանր խնայողությունների աճման անպարճ յեթե մաստաներն ավելի կուլտուրական սովորություններ ունենային: Միթե մեր պայքարը բյուրոկրատիզմի գեմ ավելի հաջողակ չեր լինի, այն բյուրոկրատիզմի, վորը վոչ միայն հասարակական չարիք է, այլև մեր տնտեսութեան արտադրիչ ուժերի զարգացման մի արգելակ: Յեվ այն և այլն: Մի խոսքով արտադրութեան անմիջական գծով մենք վրաս ենք տեսնում հաճախ այն պատճառով, վոր բավականաչափ կուլտուրական չենք: Ինչ ուզում է լինի, սակայն ներկայումս մենք արդեն ձեռք ենք լսել վորոնք գումարի հասնող միջոցներ և դա շատ խոշոր նվաճում է: Մտարերեցիք յերկրի այն դրությունը, յերբ Վլադիմիր Իլյինը խոսում էր մեր կուտակած 20 միլիոնի մասին, վորպես մի խոշոր հաջողութեան մասին: Այժմ մենք գործ ունենք վեց միլիարդանոց բյուջեի հետ: Դրանում արտացոլվում է այն հսկա հասաջագիմությունը, վոր կատարել է մեր խորհրդային շինարարութեանը:

Ապա մենք դարձեցրել ու աճեցրել ենք գերագույն չափով ժողովրդի—թե պրոլետարիատի և թե գյուղացիութեան—ակտիվութիւնը: Մենք բարձրացրել ենք մասսաների կուլտուրական պահանջները մտկարդակը: Մեր գյուղացին և մեր բանվորն այլևս նախահեղափոխական ժամանակի բանվորն ու գյուղացին չեն: Ավելին, նույնիսկ վերջին չորս տարվա ընթացքում մենք տեսնում ենք մեր բանվորութեան, մեր գյուղացիութեան կուլտուրական աճումը, մասսաների կուլտուրական կարիքների բարձրացումը: Գյուղացիական գործիչ և մանկավարժ՝ այժմ մեր կուլտուրական անդամ, ընկ. Շացկին պատմում եր ինձ, վար այնպիսի հետաքննող նախնական, վորպիսին և Կալուզայի նահանգը, գյուղերում, անհատ գյուղացիների մետ կարելի չե գրադարանների հանդիպել, վորոնք 400—500 հատոր գիրք են պարունակում: Յերբեմն «գեղջուկները» զրույց են անում Տոլստոյի, Տուրգենևի մասին և այլն: Միթե նմանորինակ բաներ չեղել են մինչև կոմունիստական «հոսի» հոկտեմբերյան արշավանքը: Մենք ներկայումս այնպիսի ենք տեղից շարժել մասսաների կուլտուրական կարիքները, վոր արդեն սկսում ենք դժվարանալ վճարում անել այդ գծով տված մեր մուրհակներով: Ուստի և միանգամայն բնական է, վոր մեր կուլտուրականութեանը, բանվոր դասակարգի ակտիվը, գյուղացիութեան ամենաառաջավոր խավերը պետք է իրենց բոլոր ուժերը լարեն, վորպեսզի մասսաների այդ աճող պահանջին կարողանան բավարարութիւն տալ:

Մասսաների կուլտուրականութեան աճել և նաև տարրական գրագրութեան գծով: Մասսաների կուլ-

տուրականութեանն աճել և նաև այն պատճառով, վոր սաստիկ լայնացել է նրանց հայեցողութեան դաշտն ընդհանրապես:

Մասսաների կուլտուրականութեանն աճել և նաև քաղաքական լուսավորութեան գծով:

Յեթե մենք խոսում ենք մեր նվաճումների մասին, ապա, յիս կարծում եմ, մենք կարող ենք ասել, առանց իրականութեան գեմ մեղանչելու, վոր քաղաքական գիտակցութեան դեմ մեղանչելու, վոր քաղաքական գիտակցութեան, դասակարգային գիտակցութեան բնագավառում այնպիսի պրոլետարիատ, վորպիսին մեր պրոլետարիատն է, աշխարհիս յիս է սին չկա: Թեքևս կարելի չե ասել, վոր իր քաղաքական հորիզոնով, այսինքն համաշխարհային քաղաքականութեան մեծ խնդիրներում իր ունեցած տեղեկութեաններով մեր գյուղացին հազել թի ավելի ցած կանգնած լինի, քան իր տնտեսութեամբ ավելի կուլտուրական արևմտա-յեվրոպական գյուղացին:

Յեթե մենք վերցնելու լինենք կուլտուրայի այդ բնագավառը, ապա կարող ենք ասել, վոր մասսաների մեծ վերադաստիարակութեանը, վոր տեղի ունեցավ հեղափոխութեան ընթացքում, (մասամբ տարերայնորեն, մասամբ գիտակցորեն—կարմիր Բանակի, մեր քաղաքականության աշխատանքի, բանվորական դիկտատուրայի ամբողջ միխանիզմի միջոցով), քաղաքականորեն կանգնեցրել է այդ մասսաներին ամբողջ աշխարհի աշխատավորների ավանգարդում:

Հսկայական աշխատանք է կատարված բանվոր դասակարգի, գյուղացիութեան մեջ: Հսկայական աշխատանք է կատարված այն ժողովուրդների մեջ, վոր

րոնք առաջ «այլազգի» էյին համարվում: Գործի այս կողմը վաղ մի պարագայում չպետք է անտեսել: Նա ավելի մեծ նշանակություն ունի, քան մենք սովորաբար կործում ենք:

Մենք նշանակելի դաստիարակչական աշխատանք ենք կատարել նաև աշխատավորների ավելի հեռու ֆուգան լրավելի մեջ, առաջին հերթին՝ կանանց մեջ: Այս բոլորին անհնարին եր հասնել և վոչ մի դիպքում՝ առանց բանվոր դասակարգի ղեկաւորութայի: Հաջողութան նախապայմանն եր յերկաթի և պողպատի լեզուն, վորով խոսում եր բանվորական ղեկաւորութան քաղաքացիական պատերազմի շրջանում:

Հետևաբար, մենք կարող ենք ասել, վոր խոշոր նվաճումներ ենք արել մասսայի մեջ մեր կատարած աշխատանքում: Նշանակելի նվաճումներ ենք արել մենք, ստեյան, նաև մեր աշխատողները կազմի մեջ կազմի մեջ կատարած աշխատանքում:

Մենք ձեռք ենք բերել կազմակերպչական խոշոր փորձ, մենք ձեռք ենք բերել խոշոր գիտելիքներ, մենք ձեռք ենք բերել խոշոր փորձառություն:

Միթե մենք արդեն նշանակելի թիվ կազմող սեփական ազգական կազմը չենք առաջ քաշել: Առաջ ենք քաշել: Կարմիր Բանակի հրամանատարական կազմը—այդ արդեն նշանակելի չափով հին մասնագետներ չեն, այլ վորակյալ ուժեր, վոր առաջ ենք քաշել սոցիալական աստորին խավերից: Բանակը շարժալուրդ կմախքն արդեն յուրաքանչյուր սոցիալական նյութից է, այն տարրերից, վորոնց մշակել և բանվորական ղեկաւորութայ կողմից քաղաքական մեծ մեքենան: Մենք արդեն սկսում ենք առաջ քաշել սե-

փական տեխնիկները կազմեր: Ամբողջ յերկրում մենք ունենք արդեն համեմատաբար փորձառու ազգային ստորադասերը կազմեր, վորոնք քաղաքացիական կռիվի, սովի դեմ մղված պայքարի, աղքատության դեմ մղվող պայքարի խիստ շիտան են անցել: Այդ մարդիկ շատ ամուր, շատ զիմացկուն նյութից են շինված: Դրանք բանվորներից են, պլանգակազմ առաջավոր բանվորներից, վորոնք մեր հեղափոխության կրակի մեջ վոչ միայն լավ կռիվ են իրենց օւսերը, ձեռներն ու գլուխը, այլև ձեռք են բերել հսկայական փորձառություն, վորին միացած և տեսական լավ մարզվածությունը: Հենց անմիջականորեն նրանց ձեռքին են դանազան մեծ ու փոքր լծակները մեր հսկա մեխանիզմի՝ թե տնտեսական և թե քաղաքական, թե խորհրդային և թե կուսակցական: Նրանք բոլորը՝ թե իրենց ազմինխտրատիվ կուլտուրականությամբ, թե իրենց փորձառությամբ, թե իրենց գիտելիքներով, հնարներով, կուլտուրական պահանջներով շատ հեռու յեն արդեն այն շատ հեղափոխական, բայց քիչ փորձառու մարդկանցից, վորպիսիք էյին նրանք քաղաքացիական կռիվի մեջ նեոպիլու ժամանակ: Ընդհանուր գծերով այս պատկերն են ներկայացնում մեր կազմերը:

Բայց վերջին ժամանակներս մենք սկսել ենք առաջադրել (և լուծել) նույնպես և այնպիսի խնդիրներ, վոր վլադիմիր Իլյիչը հետաձգում եր անորոշ ապագային, վորովհետև այն ժամանակ այդ խնդիրներն առաջադրել, իրոք վոր անհնար եր: Դրանք այն խնդիրներն են, վորոնց հավաքականորեն կարող ենք անվանել դիտական հեղափոխություն, հեղա-

փոխություն՝ գիտության, նրա մեթոդների և սխառմի մեջ:

Մի քանի տարի առաջ դա տեղի չունիր և չեր էլ կարող ունենալ: Իսկ այժմ այդ խնդիրը վոչ միայն դրվում է, այլև մասնակի կերպով լուծվում: Մի շարք գիտությունների մեջ, վոչ միայն հասարակական գիտությունների, վորոնց մեջ մարքսիզմը վաղուց արդեն հաստատել է իր կայուն հեղեմունիան, այլև բնագիտության մեջ—տեղի չի ունենում արմատական կերպարանափոխում: այդտեղ էլ մարքսիզմն սկսում է շոշափել իր դիրքերը, այդտեղ էլ խրում իր շոշափելիքները: Դա չափազանց հետաքրքրական մի յերևույթ է, վորը տարարախտարար չափազանց քիչ է լուսարանվել մամուլի մեջ: Մենք ունենք արդեն խոշոր կենսաբաններ հին գիտնականներից, վորոնք հավերժացրած լինում են մարքսիստական դիալեկտիկայի խնդիրը կենսաբանության բնագավառում: Ֆիզիկան, քիմիան, ֆիզիոլոգիան ընկել են նույն հեղեղատի մեջ:

Նույնը պետք է ասել ռեֆլեքսարանություն, հոգեբանություն, մանկավարժություն մասին: Գոյություն ունի նույնիսկ մաթեմատիկոսների մի ընկերություն, վորը քննություն է առել մարքսիստական մեթոդների կերպուման խնդիրը մաթեմատիկայի մեջ: Այդ ամենը ցույց է տալիս, վոր կուլտուրական մեր աճումը հասնում է կուլտուրայի ամենաբարձր բնագավառներին է, վոր այն մարքսիզմը, վոր գործ ունի հրացանի, քաղաքական պրոպագանդայի, տնտեսական պայքարի հետ, ծավալել է իր աշխատանքը բացարձակապես կուլտուրայի ամբողջ ֆրոնտով, մուտք է գործել կուլ-

տուրական գիտելիքի բոլոր ծալքերը, ներխուժել է վաղեմի կուլտուրայի «սրբություն սրբոցի» մեջ ձևափոխելով նրան ըստ իր կերպարանքի և նմանություն: Նույնն է տեղի ունենում նաև գեղարվեստի բնագավառում: Իմ նպատակը չէ մի աս մի թվիլ նորանոր նվաճումներն այդ ասպարիզում, բայց ամեն մի անաչառ մարդու համար պարզ է, վոր նոր գրական ու թյունը, վորը շատ մոտ է կանգնած մեզ, արդեն նշանավոր չափերով ծիլեր է արձակել մեզանում: Ամենքն էլ կարող են նշել, վոր ընթացիկ տարին մեր թատրոնի վճռական կերպարանափոխություն տարի չի: Այնպիսի բեմադրությունները, վորպիսիք են «Գոտվությունը», «Ջրահատատը», «Լյուբով Յարգոլայա», «Փուլզումը» („Разлом“), բնավ պատահական յերևույթներ չեն:

Հասկանալի չի, վոր այդ ամենը գործնական հսկանշանակություն ունի: Յեթե գեղարվեստն սկսում է վորք ի շատ խոսել մեր լողվով, այն էլ՝ առանց կազազելու, առանց սեթեվեթելու և առանց այս կամ այն կողմ աչք գցելու, դա նշանակում է, վոր մարդկային մասսաները «լցվում են», «տրամադրվում են» հեղափոխականորեն: Յեթե բնական գիտությունները—եղ չեմ խոսում հասարակական գիտությունների մասին—սկսում են իրենց հեղափոխությունն ապրել, դա նշանակում է, վոր նրանք ավելի շուտ կդառնան կուլտուրական և տնտեսական հեղափոխության գործիքներ: Յեթե մանկավարժների լայն շրջանները կանգնած կըլինեն մեր տեսակետների վրա վոչ հարկադրաբար, այլ համոզվունքով, վոչ ձևականորեն, այլ ըստ կյանքի, —դա կնշանակի, վոր նոր սերունդն ավելի խիղախ

կգա մեր յետևից և ավելի արագ կաճի զեալի սոցիալիզմ:

Սրանք են մեր հաջողություններն ու նվաճումները:

Մասսաչուսեթսի վերադաստիարակ մասնագետով, կազմակերպչով, վերադաստիարակիչով և մշակելու գծով, գիտության յիվզիչ արդիւնքով և ստի հեղափոխության ղեկով:

Ավարտած և արդյոք սրանով մեր պատմական միասին: Իհարկե, վնջ: Մենք արեւ հնք միայն առաջին քայլերը: Մենք զեռես լողում ենք աղքատության և անկուտուրականության ամբողջ մի ովկյանի մեջ մինչև կոկորդ ընկզմված: Յեզ մեր առջև աշխատանքի, — կատաղի և մոլի աշխատանքի — ամբողջ լեռներ ունենք:

Ճիշտ և, մեր «կուտուրական» թշնամիներից զմանք, վորոնց վրա իջած և հին աշխարհի յերկնից շնորհը, գուշակում են մեզ համար վերահաս վախճան, վասնզի «պատմականորեն անպետքացած» ենք արդեն: Այսպես, որինակ, տիրահոչակ պրոֆեսոր Ուստորյալովը գտնում և, վոր մենք հաղթել ենք այն պատճառով, վոր մենք, համեմատած բոլոր ասորականների» հետ, շատ ավելի յուանդոտ մարդիկ ենք: Մակայն մեզ այնուամենայնիվ վիճակված և կործանվեց ուսարյալովյան հորոսկոպի բոլոր կանոններով:

Քաղաքացի Ուսարյալովը գրում և. —

«Յերկաթի հրեշներ, արույրե սրտերով, մեքենա հողիներով, պարանե ջգերով... Դյաղյա վանյան կամ յերեք քույրերը նրանց ինչպես զիմաստ:

Մեր «ապմական» ֆրոնտներն ինչպես զիմաստան նրանց, վորոնք ահարկու լուսարձակներ ունեն, վոր այրում են խտացրած կներպիտով:

Նրանք կկործանեն անկման կուտուրան, կհապեցնեն յերկիրը նոր կամքով և ավարտելով իրենց միասին, կկործանվեն սեփական ամաշուրթյան միկրոբներից»:

Քաղաքացի Ուսարյալովը, ճիշտ և, նախագուշակից ճնշողը մի քանի «նվողների», վորոնք սկսել էին «ներքուստ ամայանալ» և իրենց այդ «ամայության» մեջ նույնիսկ գրոհ սկսեցին մեր գրքի դեմ: Բայց այդ «միկրոբները» տեղափոխեցին հյուսիսային դռները. (ծիծաղ, վորոտըն դաստ ծափեր):

Իսկ ինչ կվերաբերի մեր «ամայության», մեր կուսակցության «ամայության», ապա քաղ. Ուսարյալովը շատ անպետք մարգարե դուրս յեկավ: Կուսակցությունն այնքան և «ամայացել», վոր բանվոր դասակարգը, «միկրոբների» փորձին՝ զեռալ կուսակցության մարմնի ծակոտիներում, պատասխանեց հարցուր հազար մարտիկներին բանակ ուղարկելով, վորն ուղղակի մեքենայի մոտից յեկավ ու միացավ կոմունիստական շարքերին: «Յերկաթի հրեշները» ջտեջախեցին սպիտակներին բնավ վոչ այն պատճառով, վոր կոչակն ու Դենիկինը «Յերեք քույրերի» մարմնացումն էին (այն, վոր նրանք նույնպես բացականում էին՝ Մոսկիւս, Մոսկիւս, շատ քիչ ևր նրանց զարձում նման գավառական որիորդների. պրոֆեսորնալ այդ դահիճները թնդանութներ ել ունեյին, արտասահմանյան վոսկի յել): «Յերկաթի հրեշները» ջախջախեցին նրանց այն պատճառով, վոր իրենց յետևից

յեկող մասսաներ ունեյին, հենվում եյին պրո-
 ւէտարիատի վրա: Յեւ այդ «յերկաթե հրեշները»
 բնավ մտադիր չեն մահանալու ինչ վոր անպիտան
 միկրոբներէց, այլ խիղախ և հաստատ կառուցում ու
 մարտնչում են եւ ավելի բազմապատկւած յեռանդով
 կուլտուրայի բոլոր ֆրոնտներում իրենց կատարելիք
 ստեղծագործական միասիայի լիակատար գիտակցու-
 թյամբ անաշխարհելով մասսաներին դեպի նորանոր
 հաղթանակներ և գաղանային համառությամբ հաղթա-
 հարկելով իրենց ճամբին գտնվող հրեշավոր դժվարու-
 թյունները:

Յեթե մենք այժմ հարց տալու լինենք մեզ՝ թե
 վերջն և մեր անելիքը և պայքարի այդ
 կուլտուրական ֆրոնտում ինչ գլխա-
 վոր խնդիրներ են դրված մեր առջև,
 ապա ինձ թվում և այդ հարցին պետք է պատասխա-
 նել այսպէս. — կուլտուրական շինարարության ասպա-
 րիզում մեզ անհրաժեշտ և շուտով ազատվել այն շըր-
 ջանից, յերբ «հինը» վերջած և, իսկ «նորը» դեռ չի
 շինված: Վերջ որինաչափություն կա մեր ամբողջ
 մեծ հեղափոխության մեջ — թե անտեսական աս-
 պարիզում, թե քաղաքական ասպարիզում: Կար-
 ժամանակ, յերբ մենք տակնուվրա եյինք արել տնտե-
 սական հին ասպարատը, վերել հյինք այն, յերբ վոր
 աշխատանքի հին կարգապահությունը խախտվեց: Մենք
 փլեցրինք աշխատանքի այդ հին կարգապահությունը,
 բայց իսկույն չկառուցինք նորը: Մենք քանդի-
 ցինք անտեսության հին սխտեմը, քանդեցինք վար-
 չական հին սխտեմը, բայց իսկույն չկառուցինք
 նորը: Նույնն էր բանակի բնագավառում, և այժմ

կան գործի բնագավառում: Հին բանակը մենք
 քայքայեցինք — և այդ անհրաժեշտ էր անել, չէ՞ վոր
 անհնարին և ձվածեղ պատրաստել առանց ձվերը կոտ-
 րելու: Բայց թե իսկույն չկարողացանք կազմա-
 կերպել նոր բանակ:

Նույնը տեղի ուներ պետական ասպարա-
 տի բնագավառում: Նույնն է այժմ կատարվում, —
 դեռ կատարվում և, — կուլտուրայի ասպարի-
 զում: Մենք, որինակ, բուրժուական — մեղանական բա-
 րոյախոսությունը վաջնապրինք, մենք ծվատեցինք ու
 քայքայեցինք այն, նա մեր մատների տակ փակեց,
 բայց ասել՝ թե մենք արդեն ստեղծել ենք վարքի սե-
 փական նորմաներ, վորոնք համապատասխան լինե-
 յին մեր նպատակներին, — այդ ասել դեռևս չի կարելի:
 Շատերն արհամարհանքով են վերաբերվում հին բա-
 րոյախոսությանը (և զալով է), բայց սեփական նոր-
 մաներ դեռևս չունեն, անսանձ ճոճվում են մի տեսակ
 անող տարածության մեջ: Դա շատ վատ է և դրանից
 մենք խոշորագույն ֆրաս ենք կրում:

Կենցաղի ասպարիզում, մարդկանց հարաբերու-
 թյունները կարգավորող նորմաների ասպարիզում,
 այլև արվեստի և մի շարք այլ ասպարիզներում, վորոնք
 ըստ հյության կազմում են հենց այն, ինչ վոր
 կոչվում է «հոգևոր կուլտուրա», — մենք դեռևս չենք
 «կառուցվել», իսկ մի քանի ասպարիզներում մենք
 կառուցվածքի նախնական գծազիրն անգամ չունենք:
 Այս հանգամանքը հաճախ ծայր աստիճան բացասական
 նշանակութուն է ստանում: Բոլորիդ էլ հայանի յեն,
 իհարկե, կենցաղի և ընդհանրապես հասարակական
 կյանքի տարբեր բնագավառներից վերցրած որինակ-

ները—կործանված (և շատ տեղին կերպով կործանված) բնտանկեան-սեռային «բարոյականութունը», բայց դեռևս շատ թույլ ներգործութունն այդ բնագավառում մշակվող վարքագծի նոր նորմաների: Այստեղից էլ, այս փոխանցիկ գրութունից էլ բղխում է մեր կենցաղի մի շարք այլանդակ և վերին աստիճանի բացասական առանձնահատկութունները: Կործանված և ծառայողները և պաշտոնյաների՝ «ամսի 20-ի» հին, անցյալ իդեոլոգիան, բայց դեռևս բնավ անհրաժեշտ չափով նրանց մեջ ամբողջված չի այն իդեոլոգիան, վերի նպատակն և աշխատել սովորեցնել աշխատավորներին համար, հարգանքով վերաբերվել դեպի «խնդրատուն», առանձնապես հարգանք տածել դեպի աշխատավոր «խնդրատուն», զրուշավոր վերաբերմունքն ունենալու դեպի պետական միջոցները և այլն: Իշխանութանը հլու հպատակ դարձնելու անցյալի «իդեալը» մենք ջարդ ու փշուր արինք: Ասկայն ասել, թե մենք կյանքում—մասնաբաժան մասշտաբով—արդեն իսկ դաստիարակել ենք գիտակից հասարակական գործիչի, շինարարութան բոլոր ճակատներում պայքարողի և մորթեպաշտին ու լսկեյին հեռապնդողի տիպը, —այդ դեռևս վաղաժամ է: Մենք միայն այդ ուղղութեամբ առաջ ենք գնում, սակայն այդ ասպարեզում մեր արածը դեռևս առաջին քայլերն են: Ռացիոնալացման վողջ պրոբլեմը՝ վոչ միայն արտադրութեան վերաբերմամբ, այլև մեր ամբողջ կենցաղի նրկատմամբ, ծառայած է մեր առջև պարզապես վորպես մի պրոբլեմ, վորպես մի խնդիր, վորպիսին դեռ հարկավոր է լուծել, կամ՝ ավելի ճիշտ կը լինի ասել՝ դեռ նոր պետք է սկսենք լուծել: Այստեղ մենք

պետք է փոքր ինչ հաղաքենք մեզ՝ անկախ նրանից, թե ինչիբը մասսաներին է վերաբերում, թե՛ կադրային կազմին և կամ թե՛ «վերին կարգի» ղեկավարներին: Այստեղ մենք մեր գործը դուռս վոչ միայն չենք ավարտել, այլ և շատ հաճախ հիմքն անգամ չենք դրել: Այսպիսով, յեթև մենք խոսում ենք միքանի այնպիսի քնդհանուր խնդիրների մասին, վորոնք հիշյալ ասպարեզում դեռևս կանգնած են մեր առջև, ապա՝ այդ խնդիրները մենք կարող ենք ձեռնարկել այսպես—մենք պետք է աշխատենք վորքան կարելի յե շուտով ազատվել այս անցողիկ շրջանի մնացորդներից, յերբ հինն արդեն կործանված է, իսկ նորը դեռևս չի կառուցված: Յեղնելով այս գրութունից, մենք պետք է մի շարք խնդիրներ առաջադրենք մեզ նախ և առաջ մասնաբաժնի վերաբերմամբ, ապա՝ կարգաբաժնի կարգ մի վերաբերմամբ, վորն այժմ մասսայի առաջավոր խաղի է հանդիսանում և ապա՝ յերրորդ մասնաբաժնի վերաբերմամբ: Եթե խնդիրը վերաբերում է մասսային, ապա ինքնին հանկանալի յե, վոր մեր առջև, վորպես հիմնական խնդիր, դրված է ամենից առաջ տարրական գրադրատու թյան ճանապարհով առաջ գնալու անհրաժեշտութունը յեվ այն էլ՝ վորքան կարելի յե արագ թափով:

Վերին աստիճանի սխալ բան է,—իսկ այդ շատ հաճախ է պատահում,— յերբ «կրճատում» են խրճիթընթերցարանները, գրադարանները և նույնիսկ դպրոցները: «Ժլատութուն» անել այստեղ, այն էլ այժմ, ուղղակի անթույլատրելի յե: Առանց կրթական հաստատութունների ցանցն ընդարձակելու քաղաքակր-

թված կոռուպցիաները» դաստիարակել անկարելի յե-
կարելույն չափ լայն կերպով պետք է զննել մենք նա
և մասսայի առողջութիւնը խնդիրը և մասնավո-
րապէս արկտիկական և սիբիրական զեմ մղվող պայքա-
րը: Միայն անգրագետ և իրապէս անկուլտուրական
մարդիկ են, վոր կարող են զանց առնել այս խնդիր-
ները: Մոտ ժամանակներս յիս աչքի էլի անցկացնում
գերմանական մի պրոֆեսորի, Բոլշակեյի՝ «կուլտու-
րան և այլասերումը» վերատառութիւնն ունեցող գիր-
քը, վորը հրատարակվել է նաև ուսերին լեզվով:
Բուսկին մի շարք տվյալներով ապացուցում է, վոր
հետպատերազմյան շրջանում մասսաների գործունեյու-
թյանն առանձնապէս վնասում են մանավանդ արկտի-
կական և սիբիրական, իսկ մեզանում այդ առանձնապէս
նկատելի յի: Պայքար արկտիկական զեմ, իր խնդիր ժա-
մանցի կազմակերպումը, կլինոյի և ուսողոյի համապա-
տասխան ձևով կազմակերպելը, ֆիզկուլտուրային ըստ
ամենայնի դարկ տալը,— ահա այն ամենք, ինչ վոր
մեր հերթական խնդիրը պետք է գտնուի:

Այնուհետև մեզ անհրաժեշտ է բոլոր ուժով աշ-
խատել սովորեցնելու մեր մասսաներին առաջիկոն ա-
լացման յին թարկելու իր տնտեսութե-
թիւնը և սովորել ճիշտ հաշվելու գործը: Դա պետք
է վոչ միայն բանվոր դասակարգին, այլ և գյուղա-
ցիութեանը: Ընկ. Շաքիին՝ որինակի համար, մի
շարք գյուղացիական ծխերի հետազոտութիւն կատա-
րելուց հետո յիկել է այն միանգամայն անվիճելի յիզ-
րակացութեան, վոր՝ չնայած բյուջեյի ցածր մակար-
դակին՝ այնուամենայնիվ անգամ իսկ այդ բյուջեյի
սահմաններում կարելի յիբ շատ ավելի մեծ արտադ-

րողական եֆեկտի հասնել: Որինակ էլին բերվում
գյուղացիական բյուջեները ստույգ հետազոտութիւն-
ները և համապատասխան հաշվարկումները, վորոնք աշ-
կերտները միջոցով բաժանված էլին գյուղացիներին և
մեծ ազգացութիւն էլին գործել: Այդ հաշվարկումները
բացահայտորեն ցույց են տալիս, վոր նույնիսկ սովո-
րական բյուջեյի սահմաններում գյուղացիական տնտե-
սութիւնը կարող է մի քանի աստիճանով վեր ցատ-
կել:

Այնուհետև՝ հարկավոր կլինելու մտածել նաև մի
շարք այնպիսի միջոցներ մասին, վորոնք հնարավո-
րութիւն կտային գյուղացուն հող տանելու վնչ միայն
իր սեփական տան, այլ, գիցուկ ամբողջ վորոս-
տի, վորոստային բյուջեյի, այսինքն՝ «հասարակական»
տնտեսութեան մասին և այլն: Չէ վոր մենք պետք է
այնպիսի ընթացք բռնենք, վորպեսզի այդ վորոստ-
ներն աստիճանաբար բազկացուցիչ մասերը դառնան
այն բանի, ինչ վոր Լենինն անվանում էր «պետու-
թիւն-կոմունա»: Բան վոր ի բյուջեյի խնդիրը,
նրա ընտանեկան բյուջեյի խնդիրը, նրա մասնակ-
ցութիւնն արտադրութեան մեջ, նրա առավել հիմնա-
վոր շահագրգռութեան արտադրութեան ընթաց-
քի նկատմամբ, նրա առավել գիտակից և օրգալիսա-
կան-կուլտուրական վերաբերմունքը դեպի այդ ար-
տադրութիւնը մեր տնտեսութեան խոշորագույն խըն-
դիրներից մեկն է:

Սակայն, պետք է առաջ մղել և տեղից շարժել
նաև կենցաղի ուսցիտնալացման գործը: Պետք է ա-
սել, վոր մենք զեռ ևս ծայր աստիճան անկուլտուրա-
կան ենք, մանավանդ հանդեպ այն խնդիրների, վո-

րոնք ներկայումս ծառայած են մեր առջև: Յերբեմն մենք չենք կարողանում նույն մատը մատին տալ՝ ուղղելու համար այն մանր-մունր թերությունները, վորոնցից շատ բան է կախված: Ակումբներ, զվարճություններ, ազդեցիկ, կենսոյի խնդիրը, բազմիքներ, բնագոյններ, փոքրիկ, դպրոցներ, գրադարաններ և այլ «առարկա», «կենցաղային» հաստատություններ խնդիրները շատ հաճախ մեղանում «լուծվում» են այնպես, վոր մենք որինակ, նկարում ենք «առաջադրություններ», «պլաններ», «գրույթներ» մի շատ գեղեցիկ ընդհանուր նկար, մինչդեռ ինչ վերաբերում է այդ բոլոր ցանկալի բաների «ի կատարածիլուն», — այստեղ արդեն խնդիրն սկսում է կրիայի քայլերով առաջ գնալ:

Սակայն, դեռևս չենք նկատում, վոր մեր պրոպագանդան պետք է լինի որ ինչ ապառաջ, ցուցյց տալու և գործնականորեն կատարելու պարտադրանք, և վոչ թե «քաղաքական հոգևոր յեղևներ», վորպիսին մի ժամանակ շատ շահավետ էր, իսկ այժմ խոշորագույն չափով հնացել է արդեն: Կան մի շարք ցուցումներ այն մասին, վոր մեր աշխատանքը մեծապես կշահեր, յիժե, որինակ, այժմյան վերստուգումների և թղթի վրա կատարվող հաշվետվությունների ձևերը փոխարինելիք լավ հրահանգներ: Իրական, գործնական սպանությունը չեր հիասթափեցնի վոչ գյուղացուն, վոչ բանվորին, վոչ ընդհանրապես աշխատավոր մարդուն, ընդհակառակն՝ այստեղ կենդանի գործ կղզացվեր, առողջ մի գործ և վոչ թե բյուրոկրատական քաղաքացի: Ահա, մտավորապես, այն գլխավոր խնդիրն-

ըր, վոր ծառայած են մեր առջև, ինչ չափով վոր խոսքը վերաբերում է մասսաներին:

Այս խնդիրները, սակայն, չեն կարող լուծվել յիժե մենք վորոշ չափով չշարժենք մեր կազմային կազմը: Մի գյուղացի շատ ուսուցիչ կերպով ձևակերպեց մեր թերությունները, յերբ ասաց, թե— «Մը ընթաց մարդիկ, ուր է՞ կոմունիստները? շատ ունիք, բայց գործակատար մարդիկ ձեր մեջ քիչ են»: (Ծիծաղ): Այս բանը նշանակալի չափով ճշմարիտ է: Մեր «սրբութացությունը» հենց նրանում է կայանում, վոր մենք մեծագույն արագությամբ ինչ ասես՝ «ծրագրում» և «պլանավորում» ենք: Սակայն՝ կատարման ստուգումներ (իսկ ինչքան է ընդգծել այդ բանը Վլադիմիր Իլիչը) մեղանում դեռևս գոյություն չունի: Մինչդեռ՝ կայտցրած վորոշումների գործնական իրականացումը՝ որ ինչ ապով պրոպագանդան մղելու լավագույն յիղանակն է: Գյուղում տնտեսության ու կուլտուրայի գործնական խնդիրներին ուշադրություն ցույց տալը, իրականում ոգնություն հասցնելն անգամ իսկ ամենափոքրիկ «խնդրում» — առավել համոզիչ և լավ է բաղմամբիվ «քաղաքական ազմկարար յեղևները»: Յե՛վ ահա պրոպագանդայի և աշխատանքի հենց այս տեսակն է, վոր պետք է առաջ քաշել: Բայց կան նաև մի շարք այլ ամենատարրական «բարեմասնություններ», վորոնք մեր կազմային կազմին շատ քիչ են հայտնի և նրանց համար շատ քիչ են դարձել մի և արյուն:

Շատ է շատ ոգտակար է այժմ հիշեցնել այն պարզ լոգունները, վոր Վլադիմիր Իլիչը անկյունաքար էր համարում շինարարական ամբողջ շրջանի հա-

մար.— Բողի հաշիֆը իմացիր և խնայողարար վարերը քո անտեսությունը: Նշանակելի չտփով մենք դեռևս գուրկ ենք այս հատկություններէ: Յեթև մեր կազրերն այս ամենաանհրաժեշտ հատկությունները լավ յուրացրած լինելին, միթե մենք այնպիսի սխալներ կուեննայինք մեր հաշիֆներէ մեջ, ինչպէս այժմ ունենք: Ի հարկե, չեյինք ունենա: «Ճշտապահ յեղիր», — այս ևս շատ և շատ տարրական կանոն է: Սակայն, միթե կարելի չէ ասել, թե մեր կազրային կազմն այլևս հարյուր տոկոսով ճշտապահ է, նա այդ կանոնը լավ է յուրացրել: Այդ, ի հարկե, դեռևս չի կարելի ասել. դեռ մինչև այսօր ել նրա մեջ խորը նստած են իսկական ուստական թափթփածության մնացորդները: Պետք է սովորել ավելի արագ շրջահայաց լինել, ավելի արագ կատարել այն, ինչ վոր հարկավոր է, և ավելի գործնական լինել: Պետք է աշխատել դաստիարակել մեր մեջ մասնայի դգացմունքը, մասնայի հետ կապ ունենալու, շարունակ և անընդհատ նրանց մասին հոգ տանելու գագցմունքը բոլոր պայմաններում և ամեն ժամանակ միևնույն է նստած ես դու արդոք տրեստի, սինգիկատի, արհմիության, քաղկորնրդի, նահանգկոմի, թե գավկոմի առանձնասենյակում, թե՛ վորեկ այլ տեղ: Ելի և ելի պետք է դաստիարակել մեր մեջ պատասխանատու վոթյան զգացմունքը, մեզանում շատ հաճախ է պատահում, վոր շնորհիվ մեր կազմակերպչական շիթթի վոչինչ չես կարող հասկանալ, թե ով ինչի համար է պատասխանատու: Պատասխանատուության այդ զգացմունքի դաստիարակությունը, դասակարգի, պետության և իր իսկ սուղև ունեցած պատասխանա-

տուության զգացմունքի դաստիարակությունը կուտուրական մեր խնդիրներից մեկն է: Մեր կուտակցության վորոշ միջնախավերում գափնինների վրա ինքնագոհ կերպով հանգչելու վորոշ տեղեկացներ են նկատվում. — «սովից պրծանք, ուրեմն և՛ ամեն ինչ լավ է...» Բյուրոկրատական այդ ինքնագոհությունն ամեն կերպ պետք է հարվարծել, վորովհետև ինքնագոհության հոգիարնությունը բայլշեկակտան, կոմունիստական հոգիարնություն չէ: Այդպես մենք հետու չենք գնա: Յեղ այս խնդիրն ամենայն յեռանդով պետք է գնել յուրաքանչյուր աշխատողի, մեր կուտակցության յուրաքանչյուր իսկական և աղնիվ գինվորի սուղև: Քանի մենք դեռ ապրում ենք, քանի դեռ կենդանի յենք՝ վոչ մի հանդատություն է վնչ ել հոգեկան «ճարպակալում»:

Այնուհետև մեզ անհրաժեշտ է բարձրացնել մասնադիտական գիտելիքների մակարդակը մեր կազրային կազմերի մեջ:

Այստեղ մենք բազմաթիվ թերություններ ունենք: Այսպես, որինակ, մենք շատ քիչ միջնակարգ կրթություն ստացած տեխնիկներ ունենք, մեր նոր ինժեներները բավականաչափ վորակյալ չեն:

Միջնակարգ կրթություն ստացած տեխնիկներ, գյուղատնտեսներ, — հաճ այն պերսոնալը, վոր մեզանում շատ սակավաքանակ է: Շատ հաճախ մեր կուտակցական գործիչները, վորոնք ծանոթ չեն ամբողջ մի շարք գործնական կոնկրետ խնդիրների, խնդիրներ, վորոնք մասնադիտ. կրթություն են պահանջում, ներկայումս չեն կարողանում կատարել իրենց նաև կուտակցական-քաղաքական Ֆունկցիաները, վորովհետև այժմ

վոչ գյուղացիները և վոչ ևլ բանվորները չեն կարող բավարարվել այնպիսի ղեկավարով, վորը խոսում և Չեմբերլինի մասին, բայց վոչինչ չի հասկանում վոչ գյուղատնտեսութունից և վոչ ևլ տեխնիկայից: Մեր կուսակցութան անգամները վոչ միայն կառավարում են, այլ և ղեկավարում են, վոչ միայն գիծ են «ծրագրում», այլ և գործնականում այդ գիծն անցկացնում: Նրանք վոչ միայն «ընդհանրապես քաղաքական գործիչներ են», այլ և վարիչներ, ազմինխտրատորներ: Իսկ յեթև այդ այդպես և, ապա այդ աշխատողներն ամեն տարի պետք և ավելի և ավելի գիտելիքն և ր ձեռք բերեն ամբողջ մի շարք խնդիրների վերաբերմամբ: Յեղ այստեղ, այդ գիտությունների մակարդակը բարձրացնելուն և մասսաների առջև ունեցած պատասխանատվության զգացումը բարձրացնելուն զուգընթաց պետք և առանձնահատուկ սւշագրություն դարձնել նաև այսպես կոչված «մանրունքների» պրոբլեմի վրա:

Փորձեցեք, որինակ, այսպիսի մի փորձ կատարել — կորեցեք զանազան թերթերից «բանվորական բաժնում» զետեղված այլ և այլ գործարաններից, ֆարրիկաներից ստացված և «Պրավդայում», «Եկոնոմիչեսկայա ժիզն»-ում «Տրուզում», «Գուդոկ»-ում և այլն սպաղրված բազմատեսակ նկատողութուններն այս կամ այն թերությունների և անկարգությունների մասին, — ապա վերլուծեցե՛ք այդ տարրեր թերությունները, դուք կը տեսնեք, վոր նրանց ինը տասներորդականը «որչեկտիվ պայմաններից» չի բղխում և շատ գյուղությամբ կարող են վերացվել գործին ուշագիւր վերաբերմունք ցույց տալու դեպքում: Յեթև

բանվորական մասսայի մեջ դեպի պետական շահերն ունեցած անգիտակից վերաբերմունքի դեռևս նկատելի մնացորդներ կան, ապա մյուս կողմից, մենք գործ ունենք նաև մեր կառավարող կադրերի անկուլտուրականության հետ, այդ թվում՝ նաև կուսակցականները: Յեթև անմիջականորեն արտադրության մեջ աշխատող բանվորի հոգեբանությունը յերբեմն անփութության հոգեբանությունն և, ապա՝ կադրայիններն ևլ շատ հաճախ «մի կերպ յուր գնալու» ցանկություններն են հայտնաբերում («ավելի վատ ևլ ենք ապրել, կապրենք մի կերպ և այժմ»): Այս հոգեբանությունը փտած հոգեբանություն և: Ամեն մի ղեկավարող և առաջին հերթին՝ կոմունիստ — պետք և կուլտուրայի պիտենբելի որինակ լինի, վորն ուշագիւր կերպով վորսում և բոլոր թերություններն ու ամենավճռական կերպով ուղղում և շտկում և այդպիսիները: Վոչ մի մանրունքը մեր ներգործության սահմաններից զուրս գանվող անկարեւոր մանրունք չպիտի համարվի:

Այդպիսի «մանրունքներ» չպետք և լինեն, վորովհետև այն, ինչ վոր կոչվում և «կենցաղ», կազմվում և հենց այդ մանրունքներից: Այդ «մանրունքները» վերջի վերջն քաղաքական ֆակտոր կարող են դառնալ: Քնատ, արլոմովյան վերաբերմունքը դեպի այդ «մանր» թերությունները — մի ժանտախտ և, վոր մենք պետք և ճնշենք ու ջախջախենք: Բոլոր ուժերով պետք և աշխատենք փոքր ինչ հուպտայ մեր արհմիութենական, խորհրդային, կուսակցական գործիչներին, վորոնք անմիջականորեն կապ և գործ ունեն մասսաների հետ:

կոմունիստ չի այն դործիչը, ով «մատնների ա-
րանքից» ե նայում այս խնդիրներին: Այդպիսի ան-
փութությունը, այդպիսի անուշադրությունը դեպի
մատանների անմիջական կարիքները շատ հեշտ կեր-
պով նողկալի բյուրոկրատիզմի յի վերածվում և չի-
նովնիկի ինքնագոհության: Այս—մի բարբարոսու-
թյուն է, վոր մենք պետք է վերացնենք մեզ յենթա-
կա բոլոր միջոցներով: Պետք է հասկացնել և ասել
մեր բոլոր գործիչներին, վոր անհնարին է մատաներ
դաստիարակել, անհնարին է պոհանջել մատաներից,
վոր նրանք աշխատանքային կուլտուրայի ավելի բար-
ձրը աստիճաններին հասնեն, յերբ վոր ինքը բյուրո-
կրատական ինքնահավանության և ինքնագոհության
որինակ ես տալիս: Անհրաժեշտ է ուշադրությամբ ա-
կանջ դնել մատայի կողմից արվող յուրաքանչյուր
գործնական նկատողության, այլ վոչ թե յուրաքան-
չյուր քննադատություն—հակախորհրդային յելույթ կո-
չել, ինչպես անում են յերբեմն չարամիտ հիմարները
և բյուրոկրատական «սամոզուրները»:

Ինչ վերաբերում է ավելի «բարձր» դեկավար
կադրերին, ապա այստեղ մոտավորապես այսպիսի
խնդիրներ պետք է առաջադրել.—ավելի մոտ ծանո-
թություն Արևմուտքի և Ամերիկայի փորձին, ավելի
խորը մշակել մեր տնտեսական և այլ խոշոր պլան-
ներն ու մանյովրները, ամբողջ մի շարք գիտական
հարցերի լուծումը մասնագիտական գծերով և ԽՍՀ
Միության այլ և այլ վայրերը պարբերական կերպով
ընթացաբար անհրաժեշտությունը: Մենք բազմիցս ա-
սել ենք, վոր կոմունիստների խնդիրն է հանդիսանում
է հ ղ ա փ ո թ լ ա կ ա ն ու թ յ ու լ ն ն ու գ ո Ր ծ ն ա-

կ ա ն ո : թ յ ու լ ն ը, հեղափոխականությունը և ամե-
րիկանիզմը: Հեղափոխականությունն՝ այդ—յուրա-
քանչյուր քայլը հեղափոխական հիմնական գաղափա-
րին յենթարկելն է, մեր պայմաններում՝ միջազգային
հեղափոխությունը գաղափարին՝ մեկ կողմից և սո-
ցիալիզմի կառուցմանը՝ մյուս կողմից: Հեղափոխա-
կանությունը վոչ միայն այսպիսի գիտակցական, մտա-
կանությունը վոչ միայն յենթադրում: Հեղափոխականու-
թյունը յենթադրում է նաև վորոշ արամադրվա-
թյունը յենթադրում է հեղափոխական կիրք, հեղափոխական
ծ ու թ յ ու լ ն, հեղափոխականությունը յենթա-
լավատեսություն: Հեղափոխականությունը յենթա-
դրում է նաև վորոշ հավատ դեպի սեփական գործը,
լացկանության ժխտումը, ինչպես նաև պեստիմիզմի,
վհատության և ամեն տեսակ փտածության մերժու-
մը: Այս փտածությունն արմատապես հակասում
է ամեն մի իսկական հեղափոխական գիրքավորման:
Վեր բարձրացող դասակարգը չի կարող համակիր լի-
նել կամ՝ այսպես կամ այնպես կաշկանդված զգալ ի-
րեն փտած և անկուսնային հոգեբանությամբ: Մեր
լավատեսությունն, ի հարկի չի կարելի շփոթել այն
տխմար լավատեսության հետ, վորպիսին ընդու-
նում է, վոր աշխարհիս յերեսին ամեն ինչ լավ է,
Վոլտերն այդպիսի մի հերոս ունի, Պանգլոս անունով,
վորը և յերկրաշարժի և ծայր աստիճան անախորժ հի-
վանդության դեպքում պնդում էր միշտ, թե՛ «Ինչ
վանդության դեպքում պնդում եր միշտ, թե՛ «Ինչ
վոր կատարվում է այս լավագույն աշխարհում՝ դեպի
լավ է գնում»: Մենք չենք կարող կանգնել նաև մի
վորեի յերանելի Ոգոտիստի տեսակետի վրա, վորը
պնդում էր թե՛ ասովամ «չարիքն» սակոծել է սոսկ
նրա համար միայն, վոր ավելի լավ ընդգծած լինի

«բարին»։ Մենք վնչ Պանգլոսներ ենք և վնչ ել յերանելի Ոգոստրոսներ։ Սակայն, մենք պետք է ամենայն վճռականութեամբ պայքարենք վերստերման, անկման, քայքայման բոլոր յերևութիւնների դեմ՝ լինել այդ գրականութեան մեջ (յեսենինշչինա), քաղաքականութեան թե կենցաղի մեջ, — միևնույնն է։ Բնական է, վոր իր վերելքն ապրող դասակարգը միայն այն ժամանակ կարող է լուծել իր առջև դրված խնդիրները և մեծանշանակ գործ կատարել, յերբ նա հավատով լեցուն է դեպի իր գործը և իր ուժերը։ Մեր հեղափոխութեան պատմութեան մեջ յեղել են ծանրագին մոմենտներ և ժամանակներ, սակայն, մեր կուսակցութեանն այն պատճառով հենց հաղթական դուրս յիկավ այդ գծովարին ու ծանր ժամանակներից, վոր նա անընկճելի կուսակցութեանն և յերբեք չէր կորցնում իր հավատը դեպի ստանձնած գործը։ Այդ տեսակետից նրա առաջնորդը — Վլադիմիր Իլյիչը — նոր մարտնչող — մարդու մի նմուշ ու որինակ էր։ Մեծագույն պոետներից մեկի, Վերհարնի մոտ կա մի բանաստեղծութեան «Տրեբուն» վերտառութեամբ, վորը բառացիորեն կարելի չէ Վլադիմիր Իլյիչին համապատասխան համարել։

«Մահն ինչ է նրա համար.

իր մեծ կոչումը լրիվ նա կատարեց — և այժմ արդեն յիբկրայինը վերջացավ։

Յեւ հեռանալով կյանքի իր բեմից, նա լավ գիտե, վոր կը գան փոխարինողները։

Հոգով արիններին տանում եր նա իր հետ,

վոր բարձրացնեն վարվուուն գալիքի բոլոր քողերը։

Նա չէր թվեց ժամանակավոր տեղատուլութունից, վոր հաջորդում է սրբնթաց մակնթացութեան։ Նրա հոգին այնքան հեռու յեր խորացած գալիքներում,

վորքան վոր մարդու աչքը կարող է խորանալ։ Ամեն մարդու վիճակված չէ տիրել մարգարեյի թեւովոր խոսքին, Յեւ նա, սակայն, միս ու մարմին տվեց իր խոսքին։ Նա կարողացավ կյանքն ընկճել ու հաղթել, նա ուղից այդ կյանքը, գեպի նոր ձևերի իր ձգտման թափով, վոր առաջին անգամ բացվիլ էին նրա խրոխտ հայացքին»։

Վլադիմիր Իլյիչն իր «խրոխտ բանակութեամբ» մեր հասարակայնութեան համար «նոր ձևեր» հայտնաբերեց։ Այդ հանգամանքն այլ ևս արտահայտված է այն լողունգով, վոր արդեն համաշխարհային հեղափոխութեան լողունգն է դարձել՝ — ի շխանութեան լողունգն է իր նմուշը դնելին։ Վլադիմիր Իլյիչը մեր բոլորի առջև բարձրացրեց մեր ապագայի քողը և ցուց տվեց միաժամանակ այն մարդու որինակը, վորը չնայած բոլոր և ամեն տեսակ խոչընդոտներին և ամենածանր պայմաններին, յերբեք չիջեցրեց հեղափոխական դրոշմ, անշիդորեն գնալով դեպի իր առաջադրած նպատակը։

Մենք պարզ տեսնում ենք այժմ, թե ինչ հսկայական համաշխարհային — պատմական հեռանկարներ են ծավալվում մեր առջև։

Յերկիրը դողում է արդեն այն մեծ հեղափոխութեաններին հեռավոր վորոտումներից, վորոնք իրենց

թափով գերազանցելու յեն այն ամենն, ինչ վոր մենք արդեն ապրել և զգացիլ ենք: Հսկայական մասսաներ են արդեն շարժման մեջ դրվում և մեր յերկրում ավելի և ավելի լայն կերպով են բացվում դռները հետագա հղորակաբար ստեղծագործության առջև:

Յեւ յերբ մենք կարդում ենք այն տխմար տողերը, վոր թիւադրված են յերկյուզից հանդեպ «վայրենի հոների», կամ յերբ միջազգային բուրժուազիայի «քաղաքակիրթ» մտագործները մեղադրում են մեզ, նոր կյանքը կառուցողներին, այն բանում, թե մենք «բարբարոսներ» ենք, — մենք կարող ենք այդ դեպքում հանգիստ խղճով ասել, — մենք ստեղծում ենք և անկասկած կստեղծենք այնպիսի մի քաղաքակրթութիւն և այնպիսի մի կուլտուրա, վորի առջև կապիտալիստական վողջ քաղաքակրթութիւնը ճիշտունյն սպաւորութիւնը կթողնի, ինչ վոր մի «շան վախր» Թեթիւմենի հերոսական սիմֆոնիաների առջև: (Բուն և յերկարատե ծափահարութիւններ):

կոմունիստ չե այն գործիչը, ով «մատնների արանքից» և նայում այս խնդիրներին: Այդպիսի անփութությունը, այդպիսի անուշադրությունը դեպի մասսաների անմիջական կարիքները շատ հեշտ կերպով նողկալի բյուրոկրատիզմի յե վերածվում և չինովնիկի ինքնագոհության: Այս—մի բարբարոսություն է, վոր մենք պետք է վերացնենք մեզ յենթակա բոլոր միջոցներով: Պետք է հասկացնել և սսել մեր բոլոր գործիչներին, վոր անհնարին և մասսաներ գաստիարակել, անհնարին և պահանջել մասսաներից, վոր նրանք աշխատանքային կուլտուրայի ավելի բարձր աստիճաններին համեն, յերբ վոր ինքզ բյուրոկրատական ինքնահավանության և ինքնագոհության որինակ էս սալիս: Անհրաժեշտ է ուշադրությամբ ահանջ գնել մասսայի կողմից արվող յուրաքանչյուր գործնական նկատողության, այլ վոչ թե յուրաքանչյուր քննադատություն—հակախորհրդային յելույթ կոչել, ինչպես անում են յերբեմն չարամիտ հիմարները և բյուրոկրատական «սամողուրները»:

Ինչ վերաբերում է ավելի «բարձր» ղեկավար կազմերին, ապա այստեղ մոտավորապես այսպիսի խնդիրներ պետք է առաջադրել.—ավելի մոտ ծանոթություն Արևմուտքի և Ամերիկայի փորձին, ավելի խորը մշակել մեր տնտեսական և այլ խոշոր պլաններն ու մանյովրները, ամբողջ մի շարք գիտական հարցերի լուծումը մասնագիտական գծերով և ԽՍՀ Միության այլ և այլ վայրերը պարբերական կերպով շրջագայելու անհրաժեշտությունը: Մենք բազմիցս սսել ենք, վոր կոմունիստների խնդիրն է հանդիսանում է հղափոխականությունն ու գործնա-

կանությունը, հեղափոխականությունը և ամերիկանիզմը: Հեղափոխականությունն՝ այդ—յուրաքանչյուր քայլը հեղափոխական հիմնական գաղափարին յենթարկելն է, մեր պայմաններում՝ միջադպյին հեղափոխությունը գաղափարին՝ մեկ կողմից և սոցիալիզմի կառուցմանը՝ մյուս կողմից: Հեղափոխականությունը վոչ միայն այսպիսի գիտակցական, մտավոր զերքավորումն է յենթադրում: Հեղափոխականությունը յենթադրում է նաև վորոշ տրամադրվածություն, հեղափոխական կիրք, հեղափոխական լավատեսություն: Հեղափոխականությունը յենթադրում է նաև վորոշ հավատ դեպի սեփական գործը, լացկանության ժխտումը, ինչպես նաև պետիմիզմի, վհատության և ամեն տեսակ փտածության մերժում: Այս փտածությունն արմատապես հակասում է ամեն մի իսկական հեղափոխական զերքավորման: Վեր բարձրացող դասակարգը չի կարող համակիր լինել կամ՝ այսպես կամ այնպես կաշկանդված զգալ ինչ կամ՝ այսպես կամ այնպես կաշկանդված զգալ ինչ կամ՝ անկուսիսային հոգեբանությամբ: Մեր լավատեսությունն, ի հարկե չի կարելի շիթել այն տխրաբ լավատեսության հետ, վորպիսին ընդունում է, վոր աշխարհիս յերեսին ամեն ինչ լավ է: Վոլտերն այդպիսի մի հերոս ունի, Պանզոս անունով, վորը և յերկրաշարժի և ծայր աստիճան անախորժ հիվանդության դեպքում պնդում էր միշտ, թե՛ «ինչ վոր կատարվում է այս լավագույն աշխարհում՝ դեպի լաջի և գնում»: Մենք չենք կարող կանգնել նաև մի վորև յերանելի Ոգոստինոսի տեսակետի վրա, վորը պնդում էր թե՛ անաված «չարիքն» սսեղծիլ է սոսկ նրա համար միայն, վոր ավելի լավ ընդգծած լինի

<< Ազգային գրադարան



16010104

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.